Հոգևոր կերակուրը ճիշտ ժամանակին

Միայն հավատա՛, միայն հավատա՛,
Ամեն բան հնարավոր է հավատացողին, միայն…

Ինչպես…հիմա երգեք այսպես.

Հիմա ես հավատում եմ, հիմա ես հավատում եմ,
Ամեն բան հնարավոր է հավատացողին, հիմա հավատում եմ:
Հիմա ես հավատում եմ, հիմա ես հավատում եմ,
Ամեն բան հնարավոր է հավատացողին, հիմա հավատում եմ:

Խոնարհված գլուխներով կանգնած մնանք:

Տե՛ր, թող այս երգը սովորական երգ չլինի, այլ մեր անկեղծ փափագը, որ բխում է մեր սրտի խորքից. «Հիմա ես հավատում եմ»: Մի անգամ աշակերտներն ասացին այն բանից հետո, երբ Հիսուսն այնքան զորավոր գործեր արեց, ասացին. «Տե՛ր, հիմա մենք հավատում ենք»:

Հիսուսն ասաց. «Հիմա հավատո՞ւմ եք»:

2 Նրանք ասացին. «Մենք հավատում ենք, որ Դու ամեն ինչ գիտես և կարիք չունես, որ որևէ մեկը Քեզ սովորեցնի»: Ուստի, Հա՛յր, այս երեկո մենք հասկանում ենք, որ Դու մեր վարդապետության կարիքը չունես, այլ մենք ունենք Քոնի կարիքը: Դրա համար խնդրում ենք, որ Դու մեզ սովորեցնես, թե ինչպես պետք է աղոթենք, ապրենք և հավատանք: Ծնորհի՛ր այդ, Տե՛ր, այս երեկոյան ծառայության միջոցով: Եթե ինչ-որ բանի պակասն ունենք, շնորհի՛ր դա մեզ, Տե՛ր: Մենք այդ խնդրում ենք Հիսուսի Անունով: Ամե՛ն:

3 Գիտեմ, որ շատերը ձեզանից ստիպված են նորից կանգնած մնալ այս երեկո: Դրսում էլ հանդիպեցի խմբերի, ովքեր ասացին, որ չեն կարողացել ներս մտնել և հավաքույթը լսել են մեքենայի մեջ, ռադիոընդունիչով: Բայց այս երեկո մենք կջանանք որքան հնարավոր է արագ

ավարտել, կիրակի երեկոյան, կաղոթենք հիվանդների համար, աղոթքի շարք կունենանք, որքան կկարողանանք այստեղ անցկացնել: Բայց այսօրվա ծառայությունը կնվիրենք հիվանդների համար աղոթքին:

4 Ուզում եմ, որ հիմա հաստատվեք...Աստծո այս Սուրբ Խոսքերով հավատքի, այս ժամի հավատքի մեջ: Հավա՛տք: Մենք հիմա ավելի շատ հավատքի կարիքն ունենք, քան նախորդ ժամանակաշրջաններում, որովհետև դա պետք է լինի մի հավատք, որ կկարողանա հափշտակության ժամանակ բարձրացնել մեզ: Դրա համար ուզում ենք, որ հավատաք այն բոլոր բաներին, որ տեսել, լսել եք, քարոզած Խոսքին, որ լսել եք, նշաններին և հրաշքներին, որ տեսել եք կատարված: Ուզում ենք, որ դրանց մասին հիշողությունները պահեք ձեր սրտերում և մտածեք դրանց մասին՝ իմանալու համար, Աստծո՞ւց է, թե՞ ոչ:

5 Ինչպես հին ժամանակներում Եղիան ասաց. «Եթե Տե՛րն է Աստված, ապա Նրան ծառայե՛ք»: Եվ եթե Հիսուսն է ամեն բանի կենտրոնը քրիստոնյայի համար, ուրեմն պետք է ամեն բան թողնենք և հավատարիմ լինենք միայն Նրան: Հիշեք. Նա է կենտրոնը, Նա է բևեռային աստղը, Նա է վերջինը և Նա է բացարձակը: Եվ եթե Նա է բևեռային աստղը...Միայն մի բան է ուղղվում դեպի բևերային աստղը, դա ձեր կողմնացույցն է, որով դուք նավարկում եք: Եվ կողմնացույցը, որով ես փորձում եմ ձեզ ցույց տալ, որ նավարկեք, դա Խոսքն է, իսկ Խոսքը միշտ մատնանշում է Նրան:

6 Եվ մենք զգում ենք, որ մենք անցնում ենք նեղությունների, դժբախտությունների, փորձությունների, մոլորությունների միջով ազգերի մեջ, և ամեն տեսակի բաներ են կատարվում, և երբեմն ամեն կողմից շրջափակված եմ զգում, ուր որ նայում եմ...նավի մեջ ծովում: Եվ այդ նավի պատասխանատվությունն ինձ է տրված: Եվ ինչպես ենք մենք դուրս գալու այստեղից: Որովհետև ահա գալիս են փրփրադեզ ալիքներ, որոնք հարյուր անգամ ավելի բարձր են իմ նավից: Բայց մենք կբարձրանանք դրանցից վեր: «Մենք ավելի քան հաղթողներ ենք Նրանով»: Նավապետը՝ գլխավոր Նավապետը ամուր է պահում նավին ամրացրած պարանը, Նա մեզ դուրս կհանի այդ ամենի միջից: Մենք կդիմակայենք այդ ալիքներից յուրաքանչյուրին:

7 Հիմա, այս երեկո մենք կարող ենք արագացնել և ձեզ

շուտ արձակել...Մենք հասկանում ենք, թե ինչ երկար ճանապարհ եք անցել և ինչ զոհաբերություններ եք արել այս հանդիպմանը գալու համար: Եվ հասկանում եք, դա ինձ մղում է կանգնել այստեղ, անդադար քարոզել, փորձելով անել ամեն հնարավորը ձեզ օգնելու համար: Բայց երբ ես այստեղ եմ, փորձում եմ ամենը հնարավորինս խտացնել, որ կարողանամ օգնել ձեզ այն պահին, երբ հավաքվում ենք այստեղ: Հետո դուք վերցնում եք...Եթե մարդկանց միանգամից շատ տաս, նրանք չեն կարող բոլորը հիշել: Պետք է, պետք է մի թեմա վերցնել և հասցնել դա մարդկանց, մինչև նրանք կարողանան ըմբռնել դա: Հետո, երբ դա հաստատվի նրանց սրտերում, այդժամ նրանք...հետո նրանց ուրիշ բան սովորեցրեք: Մենք առաջ ենք շարժվում քայլ առ քայլ:

8 Հիմա, աղոթեք, քաջացեք և հավատացեք ձեր բժշկությանը այս երեկո: Չեմ կարծում, որ ձեր մտքում որևէ հարց կա մեր ապրած ժամանակի վերաբերյալ: Չեմ կարծում, որ ձեր մտքում կասկածներ ունեք այն բանի վերաբերյալ, թե արդյոք Աստված Իր ժողովրդի մեջ է, թե ոչ: Համոզված եմ, որ բոլորդ հավատում եք դրան: Եվ ես...Ես իմ մտքում ոչ մի կասկած չունեմ դրա վերաբերյալ: Եվ ես, ես, ես գիտեմ, որ իմ ժողովուրդը, իմ ընկերները, Քրիստոսի բարեկամները և Քրիստոսի զավակները հավատում են դրան:

9 Ինձ համար մեծ բավականություն է պատճառում տեսնելը, երբ գիտես, որ Աստծուց Պատգամ ունես, և դու այն տալիս ես մարդկանց, և տեսնում ես, որ մարդիկ արձագանքում են Դրան: Այն ժամանակ նայում ես հետ և ասում ես. «Ծնորհակալ եմ, Հա՛յր»: Ո՞հ, ի՜նչ ուրախություն է տեսնել, որ երեխաները ուտում են իրենց ուղարկված Հացը: Հիշո՞ւմ եք այն տեսիլքի մասին, որը տրվեց այս դահլիճում մի քանի տարի առաջ: Ճիշտ է՝ «Կյանքի Հաց»: Նևիլ եղբայր, հիշո՞ւմ եք: Հզոր, հզո՜ր ժամանակ էր:

10 Այժմ անդրադառնանք, եթե ուզում եք հետևել ընթերցմանը կան նշել այն, պարզապես...Չեմ կարծում, որ պատշաճ կլիներ ծառայություն անցկացնել առանց Աստծո Խոսքը կարդալու և քննարկելու, եթե նույնիսկ դա բժշկության ծառայություն է կամ մեկ ուրիշ հավաքույթ: Մենք բոլորս էլ հասկանում ենք: Կարծում եմ, որ մեր մեջ ոչ մի օտար մարդ չկա, և բոլորս էլ հասկանում ենք, թե բշկությունն ինչ է: Դա մարդու գործ չէ, այլ այն,

ինչ Աստված արդեն արել է ձեզ համար: Փրկությունն էլ հաստատված է նույն հիմքի վրա: Միակ բանն է՝ մղել մարդկանց հավատալ, որ դա Ճշմարտությունն է: Աստված դա սովորեցնում է Իր Խոսքի մեջ և հետո ապացուցում է նրանց համար, ովքեր կհավատան Դրան, որովհետև Նա ասում է. *«Ամեն բան հնարավոր է հավատացողներին»:*

11 Դուք ասում եք. «Աստծո համար անհնարին բան չկա»: Հավատո՞ւմ եք դրան: Ձեր համար էլ անհնարին բան չի լինի: «Որովհետև ամեն բան հնարավոր է *նրանց*» (Աստված մեկ Անձ է) «նրանց, ովքեր հավատում են»: Հասկանո՞ւմ եք: Հետևաբար ձեզ հետ, ձեզ համար ոչ մի անհնար բան չի լինի, եթե միայն կարողանաք հավատալ:

12 Հիմա Երրորդ Թագավորացում, 17–րդ գլուխ, Տիրոջ կամքով, ուզում եմ կարդալ առաջին յոթ համարները.

> *Եվ Գաղաադի բնակիչ թեզբացի Եղիան Աքաաբին ասաց. «Կենդանի է Իսրայելի Տեր Աստվածը, Ում առջև կանգնում եմ, որ այս տարիներին ցող ու անձրև չի գալու առանց իմ խոսքի»:*
>
> *Եվ Տիրոջ խոսքը նրան եղավ՝ ասելով.*
>
> *Այստեղից գնա՛ և՝ դեպի արևելք շրջելով՝ Հորդանանի դիմաց գտնվող Քերիթ վտակի մոտ թաքնվի՛ր:*
>
> *Դու այդ վտակից ջուր պիտի խմես, ու ագռավներին հրամայել եմ, որ այնտեղ քեզ կերակրեն»:*

Ուշադրությո՛ւն դարձրեք՝ «որ *այնտեղ* քեզ կերակրեն», ոչ թե ինչ–որ տեղում: «Այնտե՛ղ»:

> *Նա գնաց ու արեց Տիրոջ կամ Տիրոջ ասացի պես, քանի որ գնաց, Քերիթ վտակի մոտ մնաց, որ Հորդանանի դիմացն է:*
>
> *Եվ ագռավներն առավոտան նրան հաց ու միս ու երեկոյան էլ հաց ու միս էին բերում, ու նա վտակից էր խմում:*
>
> *Եվ եղավ, որ որոշ ժամանակ անցնելուց հետո վտակը չորացավ, քանի որ երկրի վրա անձրև չէր գալիս:*

13 Թող Տերն Իր օրհնություններն ավելացնի Իր Խոսքի ընթերցմանը: Իսկ հիմա, այս երեկո ես այստեղից եմ

ուզում վերցնել թեմա, որը կոչվում է՝ *«հոգևոր կերակուրը ճիշտ ժամանակին»:* Այս առավոր մենք դաս ունեցանք «Աստծուն ծառայություն մատուցելու, այսինքն՝ փորձել ծառայություն անել Նրան առանց…իմանալու, թե որն է դրա նախատեսված ժամը, պահը, վայրը և այն մարդը, որը պետք է անի այդ» թեմայով: Իսկ հիմա սա է՝ *Հոգևոր կերակուրը ճիշտ ժամանակին:*

14 Այս մարգարեն՝ Եղիան, մենք շատ քիչ բան գիտենք նրա մասին: Բայց մենք գիտենք, որ նա Աստծո ծառան էր՝ և Աստծո ծառան այդ ժամի համար:

15 Աստված արդեն երեք անգամ գործել է այն հոգով, որ հանգչում էր Եղիայի վրա, և խոստացել է երկու անգամ էլ կիրառել այն. հինգ անգամ, շնորհքի համար: Նախ այդ Հոգին հանգչեց Եղիայի վրա, հետո՝ Եղիսեի վրա կրկնակի չափով, Հովհաննես Մկրտչի վրա եղավ, պետք է գա հռչակելու հեթանոս Հարսին, և վերադառնալու է Մովսեսի հետ հրեաներին կանչելու համար: Դա ճիշտ է: Հինգ անգամ Աստված խոստացել է օգտագործել Եղիայի հոգին, և արդեն երեք անգամ կիրառել է այն:

16 Հիմա, այս մեծ մարգարեն, մենք չգիտենք, թե որտեղից է նա եկել: Գիտենք, որ նա թեզբացի էր, բայց, թե ինչպես եկավ…

17 Մենք շատ քիչ բան գիտենք մարգարեների մասին: Մենք չգիտենք, թե որտեղից են նրանք գալիս: Շատ հազվադեպ…Որքան գիտեմ, ոչ մի մարգարե երբևէ դուրս չի եկել որևէ եկեղեցուց կամ ունեցել որևէ ծագումնաբանություն: Նրանք բոլորը հասարակ մարդիկ էին՝ անվախ և շատ անգամ առանց կրթության: Եվ նրանք երբեք ինքնուրույն գրառում չեն արել: Եսային և Երեմիան, նրանցից մի քանիսը որոշ գրություններ արել են, բայց այս մեծ մարդը՝ Եղիան երբեք ոչինչ չի գրել: Նրանցից շատերը ոչինչ չեն գրել, գուցե այն պատճառով, որ գրել չգիտեին: Բայց նրանք խիստ մարդիկ են եղել: Աստվածաշնչում այդ հին մարգարեների նման ոչ մեկը չի եղել: Նրանք մարտահրավերներ էին նետում թագավորություններին, թագավորներին, մարդկանց, եկեղեցիներին և այլն՝ հաստատուն մնալով Աստծո Խոսքի մեջ, և Աստված էր հաստատում նրանց իրավացի լինելը: Նրանք շատ խիստ մարդիկ են եղել:

18 Եվ այս Եղիան նրանցից ամենախիստներից մեկն էր: Նա անապատի մարդ էր: Նա անապատից էր դուրս

եկել, ապրում էր անապատում: Աստվածաշունչն ասում է, որ նա բրդից հագուստ էր հագնում: Նրա շուրջը փաթաթված էր ոչխարի մորթով, և ուղտի կաշուց մի գոտի էր կապած նրա մեջքին, շատ…դեմքին բեղ ու մորուք, և ես պատկերացնում եմ, որ նա շատ կոպիտ տեսք ունեցող մարդ էր, եթե նայես:

19 Բայց մենք չ…նրանք բոլորը չմահացան: Նրանք բոլորը, բոլորը չեն մահացել: Նիկիայի տիեզերաժողովի ժամանակ, ձեզանից շատերը կարդացել են *վաղ շրջանի եկեղեցու Նիկիայի տիեզերաժողովի մասին,* երբ նրանք ուզում էին կազմակերպություն ստեղծել և քանդել մնացած եկեղեցիները և մտնել մեկի մեջ, երբ Նիկեայի այդ խորհուրդը տեղի ունեցավ, հենց այդ ժամանակ Եղիայի նման խիստ մարդ հայտնվեց, այնտեղ անապատից, միայն խոտաբույսեր ուտող, հզոր խիստ մարդիկ: Բայց Կոնստանդինի օրոք բարձրաստիճան պաշտոնյաները և նրանց շքախումբը լռեցրին այդ մարդկանց: Որովհետև նրանք, մարգարե լինելով, գիտեին, որ ցորենի հատիկի նման Հարս–Եկեղեցին պետք է ընկներ հողի մեջ, Փեսայի նման, որը եղավ հողի մեջ ընկած առաջին հատիկը: Նրանք գիտեին, որ այդ հատիկը կմնար հողում հազար տարի:

20 Դրա համար են այսօր գրքերում գրում. «Ո՞ւր էր այն լուռ Աստվածը, որը կանգնել և նայում էր, թե ինչպես էին սպանում փոքրիկ երեխաներին, թե ինչպես են առյուծները պատառոտում կանանց, և մնում էր երկնքում առանց ոչ մի բառ ասելու»: Նրանք Խոսքը չգիտեն: Ցորենի հատիկը պետք է ընկներ հողի մեջ: Ինչպե՞ս կարող էր արդար Աստված կանգնել և դիտել Իր սեփական Որդու մահը, երբ թքում էին Իր վրա և այլն: Բայց դա Խոսքի համաձայն է, պետք է այսպես լիներ: Դրա համար դա այդպես է նույնիսկ առ այսօր:

21 Այս մարդը, նա մեծ մարդ էր: Նրա դիմաց մեղավոր սերունդ էր: Աքաաբը թագավոր էր, նրանից առաջ եղած իր հայրը նույնպես չար թագավոր է եղել: Սողոմոնից հետո իրար հաջորդեցին մեկը մյուսից չար թագավորներ: Եվ այս մարդը՝ Աքաաբը, ով քսաներկու տարի թագավորեց Սամարիայում, նրանցից ամենավատն էր: Նա իսկական մոդերնիստ էր: Անշուշտ, նա հավատում էր կրոնին: Եվ նա ամեն բան հարմարեցնում էր իր ժամանակաշրջանին: Նա ուներ չորս հարյուր եբրայեցի մարգարեներ, բոլորն էլ լավ կրթված և վարժված էին:

Մինչդեռ Աստված նրա մոտ ուղարկեց մեկին, որին նա չհավատաց, և դա Եղիան էր։

22 Բայց Եղիան՝ այս թեզբացին, անապատի մարդ էր։ Նա ոչ թե մեղմ, այլ խիստ մարդ էր։ Եվ մի օր, այն բանից հետո, երբ Աքաաբը այնքան մեղքեր էր կուտակել, որ Աստված այլևս չէր կարողանում դա հանդուրժել, խոսեց Եղիայի հետ անապատում։ Եվ ահա նա գալիս է Սամարիայի ճանապարհով, ինչպես հաճախ ներկայացրել եմ. գուցե դեմքը ծածկված էր սպիտակ մորուքով, ճաղատ գլուխը փայլում էր արևի տակ, խորաթափանց հայացք ունեցող փոքր աչքերով, գավազանը ձեռքին, ժպիտը դեմքին, նա ուղիղ մտավ Իսրայելի թագավորի մոտ, և ասաց. «…նույնիսկ ցող չի իջնելու առանց իմ խոսքի»։

23 Թող Աստված մեզ այդպիսի մարդիկ տա, որոնք գիտեն, թե ինչ պետք է անեն «ԱՅՍՊԵՍ Է ԱՍՈՒՄ ՏԵՐԸ» խոսքի հետ։

24 Հիմա, մենք տեսնում ենք, որ մինչև Եղիայի գործելը, Աստված կանչել էր նրան։ Աստված խոսել էր նրա հետ, դրա համար էլ նա ոչ մի բանից չէր վախենում։ Նա չէր վախենում, որ իր բերած պատգամը չի իրագործվի, նա գիտեր, որ դա իրականանալու է։ Նա գիտեր, որ դա Տիրոջ Խոսքի համաձայն է, և գիտեր, որ ինքն էլ Աստծո մարգարեն է այդ ժամի համար։ Դրա համար նրան չէր հուզում այն, որ թագավորը կարող է գլխատել նրան, կամ բանտ նետել կամ մեկ ուրիշ բան անել, նա հանձնարարություն ուներ. «ԱՅՍՊԵՍ Է ԱՍՈՒՄ ՏԵՐԸ», ուղիղ թագավորի երեսին։ Ինչպիսի՜ ուժեղ անձնավորություն։ Բայց մինչև այդ անելը, նա կանխասեց այդ մեծ երաշտը…

25 Որովհետև Աստված անպատիժ չի թողնում մեղքը։ Պետք է պատիժ լինի։ Ի՞նչ օգուտ օրենքից, եթե պատիժ չկա։ Ի՞նչ իմաստ կունենար ասելը. «Օրենքին հակառակ է կարմիր լույսի տակով անցնելը», եթե տուգանք կամ պատիժ չլիներ դրա համար։ Դա օրենք չէր լինի։ Մեղքը պետք է պատժվի։ Եվ երբ Աստված օրենք է տալիս, և այդ օրենքը, օրենքը խաղտվում է, ուրեմն պետք է պատիժ լինի դրա համար։

26 Իսկ այդ ազգը խախտել էր Նրա բոլոր օրենքները։ Ո՛հ, նրանք մեծ եկեղեցի ունեին, ունեին տաճարը։ Ունեին շատ կրթված մարդիկ։ Ունեին մարգարեներ ողջ երկրով մեկ, դրանց դպրոցները, որտեղից դուրս էին գալիս թողարկված մեքենաների պես։ Նրանք ունեին

բազմաթիվ մարգարեներ, քահանաներ, դպիրներ, և օրենքի առատություն, բայց հեռու էին Աստծո Խոսքից: Դրա համար Աստված նրանց շարքերից դուրս կանչեց մի մարդու, և ուղարկեց «ԱՍՊԵՍ Է ԱՍՈՒՄ ՏԵՐԸ» խոսքով:

27 Տեսեք, թե Աստված ինչպես է հոգ տանում Իրենների համար: Նախքան մարգարեին պատգամով ուղարկելը, Նա ասաց. «Եղիա,՝ գնա և ասա՝ բոլոր այս բաները Աքաաբ թագավորին: Եվ երբ որ դա անես, անմիջապես հեռացի՛ր նրանից, որովհետև Ես քեզ համար մի տեղ եմ պատրաստել, որ գնաս երաշտի ժամանակ: Ես քեզ համար հոգ կտանեմ, Եղիա, եթե դու միայն քարոզես Իմ Խոսքը և անես միայն այն, ինչ Ես եմ պատվիրում»:

28 Ես այս երեկո համեմատելու եմ Եղիայի այս մեծ ծառայությունը և նրա ժամանակները այն ժամի հետ, որում մենք ապրում ենք: Կարծում եմ, որ դա կատարյալ խորհրդապատկեր է: Ես մտածում եմ այն ազգերի...եթե ես...մենք ժամանակ ունենայինք հետ նայելու, բայց ես ուզում եմ ժամանակի մեծ մասը տրամադրել աղոթքի շարքին:

29 Եթե մենք կարողանայինք հետ գնալ, կտեսնեինք, որ Իսրայելը Պաղեստինը նվաճել է այն նույն հիմքի վրա, ինչ որ մենք՝ Միացյալ Նահանգները: Մենք եկել ենք այս երկիրը՝ Միացյալ Նահանգները, և այստեղից վոնդել ենք բնակիչներին, ովքեր հնդկացիներ են եղել և նվաճել ենք այն: Այնպես էլ Իսրայելը եկավ Պաղեստին Հեսուի առաջնորդությամբ, Աստծո առաջնորդությամբ, վոնդեց բնակիչներին և գրավեց երկիրը:

30 Նրանց առաջին թագավորները մեծ և զորավոր մարդիկ էին. Դավիթը, Սողոմոնը: Մեր առաջին նախագիները նույնպես մեծ մարդիկ էին. Վաշինգտոնը, Լինքոլնը և այլն: Հետո նրանց նախագահները կամ թագավորները ավելի ու ավելի ապականվեցին և վերջապես հասան Աքաաբին: Շատ տիպիկ է, բնորոշ է մեր օրերին: Մարդիկ այնքան ժամանակակից էին դարձել, որ չէին ուզում լսել Աստծո Խոսքը:

31 Կարո՞ղ եք պատկերացնել, թե ինչ ազդեցություն կունենար Աստծո ճշմարիտ ծառայի պատգամը այդպիսի մի ժամանակակից ժողովրդի վրա: Նրանք կարծում էին, թե Եղիան խելագար էր, խելքը թոցրել էր: Այդպիսի բան հնարավոր չէ: Նրանք կրոնասեր էին, շատ կրոնասեր: Նրանք ունեին ակնեղծ առաջնորդներ, անկեղծ ժողովուրդ: Նրանք շատ կրոնասեր էին:

32 Եղիան գիտեր, որ հարկավոր է ավելին, քան պարզ աստվածաբանություն, դա պահանջում էր ավելին, քան, քան սովորական պատգամը, նրանց քարացած սրտերը կոտրելու համար կպահանջվեր ավելին, քան պարզապես Խոսքը քարոզելը: Նա գիտեր, որ պետք էր «ԱՅՍՊԵՍ Է ԱՍՈՒՄ ՏԵՐԸ»՝ այդ ժողովրդի վրա դատաստան բերելու համար: Հետևաբար նա գիտեր դա, երբ դուրս եկավ «ԱՅՍՊԵՍ Է ԱՍՈՒՄ ՏԵՐԸ» խոսքով (և դա «ԱՅՍՊԵՍ Է ԱՍՈՒՄ ՏԵՐՆ»-էր): Դա արհամարելը՝դատաստան էր: Նույնը տեսնում ենք մեր օրերում: Նույնը տեսնում ենք բոլոր ժամանակաշրջաններում: Երբ շնորհքի սահմանը անցնում ես, դատաստանից բացի ոչինչ չի մնում:

33 Հիմա, դա նախապատկերն է այնտեղ, ես համեմատելու եմ Եղիային այսօրվա եկեղեցու, մեր օրերի եկեղեցու հետ: Դատաստանից անմիջապես առաջ նա ստացավ այս պատգամը: Եղիան, նա ներկայացնում էր բնական, բնական սննդի մասին հոգատարությունը, որովհետև Տիրոջ Խոսքի համաձայն երեք տարի և վեց ամիս անձրև չէր գալու, կամ մինչև Եղիան խնդրեր դրա համար: «Երբ էլ որ խոսես, Եղիա, դա կլինի ճիշտ ժամանակը»: Դրա համար նա գնաց թագավորի մոտ և ասաց. «Նույնիսկ ցող չի իջնի առանց իմ խոսքի»: Բավականին ծանր բեռ է, այնպես չէ՞: Ա՜յ քեզ պատգամ:

34 Եվ հիմա մենք կհամեմատենք դա այսօրվա հոգևոր երաշտի հետ: Հիմա, մենք բոլորս էլ գիտենք, բոլորս էլ լավ գիտակցում ենք, որ այսօր, հոգևոր լեզվով ասած, հոգևոր մեծ երաշտ է տիրում երկրի վրա: Եվ գիտե՞ք, որ սա կանխասվել էր մարգարեների կողմից, որ պետք է կատարվեր Քրիստոսի Երկրորդ Գալուստից անմիջապես առաջ: Ասվել էր. «Ահա սով է լինելու երկրի վրա, և դա ոչ թե հացի սով է լինելու միայն, այլ՝ Աստծո Խոսքը լսելու սով»: Եվ այդ օրը հիմա է՝ «Աստծո ճշմարիտ Խոսքը լսելու սովը»: Հիմա, այս բնական երաշտը հոգևոր երաշտի խորհրդապատկերն է:

35 Սուտ վարդապետների և եկեղեցու մոդեռնիստների մեղքն ու անհավատությունը հասցրել են եկեղեցուն այս վիճակին: Նրանք շրջվել են Աստծո Խոսքից և Իր մարգարեներից դեպի Խոսքի ժամանակակից աստվածաբանական տերմինները:

36 Եթե նկատեցիք այստեղ, հենց այդ ժամանակում է, որ Աստված միշտ ինչ-որ բան է վեր հանում, որովհետև Նա միշտ, Ինքը ոչինչ չի անում առանց նախօրոք իր

ժողովրդին հայտնելու, և դա միշտ հայտնում է Իր ծառաների միջոցով:

37 Հիմա, բայց Եղիան այդ ժամանակաշրջանում գաղտնի մի վայր ուներ, որտեղ Աստված նրան պատվիրել էր գնալ: Հենց դա ենք ուզում մենք հիմա դիտարկել, աղոթքի շարք ունենալուց առաջ: Եղիան Աստծո կողմից պատրաստված գաղտնի վայր ուներ: Հիմա, ո՛չ եկեղեցին, ո՛չ թագավորը, ո՛չ էլ Եղիան ինքը ապահովեց դա իր համար, այլ Աստված գաղտնի վայր տրամադրեց Եղիային, որ կերակրվի երաշտի ողջ ժամանակ, որտեղ նրա սնունդը ապահովված էր ամեն օր: Նա կարիք չուներ ինքն հարցնելու, թե ի՞նչ կլինի վաղը կամ արդյո՞ք պաշարը կվերջանա: Աստված ասել էր. «Ես ագռավներին հրամայել եմ, որ քեզ կերակրեն»: Ի՜նչ հրաշալի է: Դա Քրիստոսի մեջ մեր գաղտնի վայրի խորհրդապատկերն է:

38 Երբ համաշխարհային խորհուրդը և այն ամենը, ինչ տեղի է ունենում այսօր ասում է. «Հրաշքների ժամանակներն անցել են»: Աստծո մեծ զորությունը վերցվել է եկեղեցիներից: Կարծես, թե նրանք «ձայն հանող պղնձից և ղողանջող ծնծղայից» բացի այլևս ոչինչ չունեն: Մենք գիտենք, որ դա ճշմարտությունն է: «Նրանք աստվածապաշտության կերպարանքն ունեն, բայց նրա զորությունը ուրացել են»:

39 Նրանք նույն բանն են անում, ինչ Դավիթն էր անում եզներ լծած կառքով, երբ հեռանում էր Խոսքից: Երբ Խոսքը ներկայացվեց և տրվեց իրենց, նրանք մերժեցին. որովհետև հեռացել էին դրանից:

40 Ահա թե ինչ էին արել Եղիայի օրերում ապրող մարդիկ. հեռացել էին Խոսքից: Նրանք կարծում էին, որ Խոսքն ունեն, բայց իրականում չունեին:

41 Ուշադրություն դարձրեք, հետո…այն ժամանակ, երբ Աստված պատրաստվում էր պատժել անհավատներին, Նա ճանապարհ էր պատրաստում հավատացյալների համար: Նույն բանը Նա անում է ամեն անգամ: Այն ժամանակ, երբ Նա պատրաստվում էր աշխարհը ջրհեղեղով կործանել, Նոյի համար փախուստի ճանապարհ պատրաստեց: Այն ժամանակ, երբ Նա պատրաստվում էր Եգիպտոսը խորտակել, ծովի միջով փախուստի ճանապարհ բացեց Իր ժողովրդի համար: Ինչպե՜ս է Աստված ճանապարհը բացում: Որտեղ չկա ճանապարհ, Նա է այդ ճանապարհը: Նա՛ է այդ ճանապարհը:

42 Մենք հիմա գիտակցում ենք, որ բախվում ենք... պատմության մեջ եղած ամենահանդիսավոր ժամերից մեկին: Փայլուն, պսպղուն մարտագլխիկով հրթիռ չէ, որից մենք պետք է վախենանք, այլ եկեղեցիներից է, որ պետք է վախենանք: Մեր ապրած ժամանակում է, որ պետք է աչալուրջ լինենք:

43 Հիմա ուշադրությո՛ւն դարձրեք, բայց Աստված ճանապարհ պատրաստեց Եղիայի համար, որ փախչի: Նա նաև ճանապարհ է պատրաստել Իրեն հավատացող զավակների համար, որպեսզի հիմա փախչեն բարկությունից և գալիք բաներից:

44 Որովհետև Աստված արդար չէր լինի, եթե դատապարտության մատնելով այդ մարդկանց և պատիժ ուղարկելով նրանց վրա, և խորտակելով Սոդոմն ու Գոմորը, և ծովի մեջտեղում խորտակելով Կափառնայումը, և դատապարտելով այդ սերունդներին, ինչպես նաև Սոդոմն ու Գոմորը, և հետո թույլ տա մեզ նույն բանն անել և թողնել անպատիժ: Ինչպես նրանց, այնպես էլ մեզ համար անհնար է փախչել դատաստանից: Հիմա, մենք տեսնում ենք. որ...

45 Երբ այս բաներն ի հայտ եկան՝ այդ օրվա ժամանակակից միտումը, Աստված մի մարդ բարձրացրեց, կամ, ավելի ճիշտ՝ մի մարդ հանեց, որ մարտնչի այդ զորությունների դեմ, բայց նրան չլսեցին: Նրանք կարծում էին, թե նա խելագար է, խելքը կորցրել է, մի ծեր ֆանատիկ է, անապատից փախած մի խելագար է, մի վայրենի: Բայց նա ուներ Տիրոջ Խոսքը:

46 «Աստվածաշունչը չպետք է բառացի հասկանալ», ասում են այսօր: «Ո՛հ, դե, Աստվածաշունչը պատմական գիրք է»: Կարծում եմ բոլորդ էլ լսել եք, թե ինչ են նրանք պնդում, որ՝ «Եվան ոչ թե խնձոր է կերել, այլ...»: Ի՞նչ էր դա: Կարծեմ...«Ծիրան էր», ասում են նրանք հիմա: «Դա ծիրան էր»: Նաև ասում են, որ՝ «Մովսեսը Իսրայելի զավակներին Կարմիր ծովի միջով չի անցկացրել: Դա եղեգների մի ընդարձակ դաշտ էր, մեծ քանակությամբ եղեգներ էին աճում մինչև ծովի մյուս կողմը, և նա անցել է եղեգների ծովով»: Այդ դեպքում ինչպես ջուրը, ջ–ու–ր–ը, ջուրը նրանց աջ և ծախ կողմերից պարիսպ դարձավ, և նրանք ցամաքով անցան: Ո՛հ, ինչպիսի՜ անհեթեթություն: Բայց տեսնում եք, այդ ժամանակների նման ինչ–որ բան է պետք, Աստծո բարկությունը մարդկանց վրա թափելու համար: Այդպես էլ լինում է:

47 Նրանք ասում են, այդպիսի բան չկա, ինչպես, ինչպես այդ...Նույնսիկ եկեղեցական մարդիկ չեն հավատում հրաշքներին: «Հազար դոլար կտամ,— ասում են նրանք,— եթե ինձ մի հրաշք ցույց տաք: Ինձ հրաշք ցույց տվեք»: Նրանք չէն կարողանա դա տեսնել, նույնիսկ եթե տաս հազարավոր բան էլ արվի նրանց առջև: Նրանք, նրանք երբեք չեն տեսնի այդ:

Դուք ասում եք. «Դա անհնար է»: Ո՛հ, ոչ, այդպես չէ:

48 Մի անգամ Եղիան իջել էր Դոթայիմ, և սիրիական բանակը եկել և պաշարել էր քաղաքը՝ գերության առնելու նրան, որովհետև գիտեին, որ այդ ազգի զորությունը տեսանողի մեջ էր: Թագավորը...Մի մարդ ասաց Սիրիայի թագավորին, ասաց. «Գիտե՞ս, Եղիա մարգարեն է՝ թեզբացին, որ քո գաղտնի ննջարանում խոսացածդ հայտնում է Իսրայելի թագավորին»:

49 Ասաց. «Գնացե՛ք, բռնե՛ք նրան: Այդ մարդն է մեզ խոչնդոտում»: Եվ ամբողջ սիրիական բանակը պաշարել էր Դոթայիմը: Նրանք շրջապատել էին այն:

50 Գեեզին՝ մարգարեի ծառան, արթնացավ և ասաց. «Ո՛հ, հա՛յր իմ, զորքերն այստեղ մեր շուրջն են: Մենք ամբողջությամբ շրջապատված ենք»:

51 Նա պատասխանեց. «Մեզ հետ եղողները նրանց հետ եղողներից շատ են»: Տեսնո՞ւմ եք:

Գեեզին չորս կողմը նայեց և ասաց. «Ես ոչ ոքի չեմ տեսնում»:

52 Նա ասաց. «Տե՛ր Աստված, բաց արա՛ նրա աչքերը»: Նրա աչքերը բացվեցին, և նա տեսավ, որ սարերը լիքն էին Հրեշտակներով և կառքերով, անտեսանելի ուժերով:

53 Եղիան գնաց այնտեղ, և Աստվածաշունչն ասում է, որ՝ «Նա կուրությամբ հարվածեց նրանց»: Նա գնաց նրանց մոտ. նրանք կույր էին նրա շուրջը: Դուրս եկավ և ասաց. «Դուք Եղիայի՞ն եք փնտրում»:

Նա ասաց. «Այո՛, մենք նրան ենք փնտրում»:

54 Ասաց. «Եկե՛ք, ես ձեզ կասեմ, թե որտեղ է նա», և նրանց տարավ դարան, հենց այնտեղ որտեղ բանակը դուրս եկավ և գերեվարեց նրանց:

55 Հիմա, Աստվածաշունչն ասում է. «Նա նրանց հարվածեց կուրությամբ»: Ահա, թե ինչում է խնդիրը: Այսօր էլ մարդիկ հոգևորապես այնքան կույր են, չնայած Տեր Աստվածը իջնում է մարդկանց մեջ և ինչ-որ բան

է անում, և այն բաները, ինչ խոստացել էր, մինչդեռ նրանք անկարող են տեսնել այդ: Նրանք հոգևորապես կույր են. չեն ճանաչում Աստծուն, չեն ճանաչում Նրա մեծ զորությունը: Հիմա, մենք տեսնում ենք, որ նրանք այդպես վարվեցին Եղիայի ժամանակ, և առ այսօր էլ վարվում են այդպես: Աստված նրանց զարկում է կուրությամբ: Նրանք այսօր ասում են, որ՝ «Այլևս հրաշքներ չկան, նման բան չկա, դրանք էմոցիաներ են»:

56 Նույն բանն էլ ասում էին Եղիայի մասին, որովհետև երբ նա համբարձվեց երկինք և երիտասարդ Եղիսեն նրան փոխարինեց, արդեն երիտասարդ տարիքում ճաղատացել էր, երեխաները վազում էին նրա հետևից և ասում էին. «Ծեր ճաղատ, ինչո՞ւ Եղիայի հետ երկինք չբարձրացար»: Տեսնում եք, նրանք՝ մարդիկ, սկզբից էլ նույնիսկ չէին հավատացել դրան, այսքան բաներ արված լինելուց հետո: Աստծո այս մեծ մարդն էլ հրեղեն կառքով տեղափոխվել էր երկինք, իսկ մարդիկ դեռևս չէին հավատում դրան: Եվ նրանց փոքրիկ երեխաները վազում էին նրա հետևից և ասում էին. «Ծեր ճաղատ, ինչո՞ւ դու չհամբարձվեցի՞ր»: Տեսնո՞ւմ եք: Եվ այդ ժամանակ մարգարեն անիծեց երեխաներին, և էգ արջը սպանեց նրանցից քառասուներկուսին:

57 Այժմ ուշադրությո՛ւն դարձրեք: Այսօր, ինչպես և այն ժամանակ, իրենց ձևով են մեկնում Խոսքը: Հիմա, եթե նրանք ուզում են անել այդ, դա իրենց գործն է, բայց նրանք փորձում են մեզ հավատացնել դրան: Աստվածաշունչն է ասում, որ. «Աստծո Խոսքը ենթակա չէ հատուկ մեկնության»: Աստված է տալիս Իր սեփական մեկնությունը: Նա հաստատում է Իր Խոսքը, և դա է Դրա մեկնաբանությունը: Ինչպես բազմիցս ասել եմ, սկզբում Նա ասաց. «Թող լույս լինի», և լույս եղավ: Ոչ մի մեկնություն պետք չէր, դա իրականացավ: Նա ասաց. «Կույսը կհղիանա», և նա հղիացավ: Նա ասաց. «Իր Հոգին կթափեմ», այդպես էլ արեց: Նա ասաց «վերջին օրերում», այն բաները, որոնք Նա անելու է, և Նա անում է դա: Դա մեկնության կարիք չունի, Աստված է տալիս Իր սեփական մեկնությունը: Կապ չունի, թե մարդիկ ինչ անմտություններ են ասում, դա բոլորովին էլ չի կարող կանգնեցնել Աստծուն:

58 Երբ Հիսուսը երկրի վրա էր կանգնած էր նույնպիսի անհավատության դեմ, ինչպիսին կա նաև այսօր, գուցե ավելին: Բայց դա չկանգնեցրեց Նրան: Նա շարունակում

էր անել և կատարել Իր պարտականությունը, և Աստված հաստատում էր այն ամենը, ինչ Նա անում էր: Նա ասաց. «Ես մենակ չեմ: Ես և Իմ Հայրը մեկ ենք. Նա բնակվում է Իմ մեջ: Ես չեմ անում այս գործերը, այլ Հայրը, որ բնակվում է Իմ մեջ: Եվ եթե ես Նրա գործերը չեմ անում, ուրեմն Ինձ մի՛ հավատացեք: Իսկ եթե անում եմ այդ գործերը, եթե Ինձ էլ չեք հավատում, գոնե գործերին հավատացեք»: Հասկանո՞ւմ եք: Այլ կերպ ասաց, նրանք...«Քննեցե՛ք Գրքերը,— ասաց Նա, քանի որ կարծում եք, թե դրանցով հավիտենական կյանք ունեք, Գրքերի իմացությամբ: Եվ հենց Գրքերը վկայում են Իմ մասին»: Ամե՛ն: Ինչպիսի՜ հայտարարություն: «Հենց Գրքերն են հայտնում, թե Ով եմ Ես»,— ասաց Հիսուսը:

59 Եվ հենց Գրքերն են, որ ձեզ հայտնում են ժամը, որում մենք ապրում ենք: Եվ այն բաները, որոնք դուք տեսնում եք արված, Դա Աստված Ինքն է Իր ժողովրդի մեջ: Աստծուց բացի ոչ ոք չի կարող հարություն տալ մեռելներին: Բացի Նրանից, ոչ ոք չի կարող անել այն բաները, որոնք Նա անում է հիմա: Որովհետև Աստվածաշունչն ասում է. «Նա նույնն է երեկ, այսօր և հավիտյան»:

60 Մենք տեսնում ենք ժամանակակից միտումները նրանց, ովքեր ասում են. «Ո՛հ, հրաշքների ժամանակներն անցել են, նման բաներ չկան: Այս մարդիկ ուղղակի հուզված են և էմոցիաների ազդեցության տակ»:

61 Լսեք Եղիա մարգարեին, ով աղաղակում էր նրանց և նրանց աստվածաբանների դեմ: Ուշադրությո՛ւն դարձրեք, նկատե՛ք նա այնպես էր խոսում կարծես Ինքը Աստված լիներ: Եղիան այնպես էր խոսում կարծես Ինքը Աստված լիներ. «Նույնիսկ ցող չի իջնի երկնքից առանց իմ խոսքի»: Ամե՛ն: Այո՛, պարոն:

62 Մարգարեն այնքան երկար մնաց Աստծո Ներկայության մեջ, Հին Կտակարանի կամ ցանկացած ժամանակների մարգարեները ապրում էին Աստծո Ներկայության մեջ այնքան, մինչև իրենք էլ դառնային Խոսքը, նրանց Պատգամը հենց Խոսքն է: Հիշեք, նա ասաց. «ԱՅՍՊԵՍ Է ԱՍՈՒՄ ՏԵՐԸ»: Եվ երբ այդ մարդիկ ստանում էին Աստծուց այդ պատգամները, և նրանք այնքան էին պարուրվում դրանով, որ իրենց սեփական մտքերը...Գուցե այդ պատգամը հակառակ էր իրենց սեփական մտքերին, կամ գուցե լիովին չէին կարողանում

դա հասկանալ։ Բայց նրանք հաղորդում էին Աստծո Խոսքը. «ԱՅՍՊԵՍ Է ԱՍՈՒՄ ՏԵՐԸ»։

63 «Անձրև չի գալու առանց իմ խոսքի»։ Ո՜հ, ինչպիսի՜ հայտարարություն։ Եղիան կանգնել էր Աստծո Նեկայության մեջ, և նրա խոսքը լիովին հաստատվեց։ Հիշե՛ք, որ դա նույնպես համապատասխանում է Ամովսի 3–րդ գլխի 7 համարին. «Տեր Աստված ոչ մի բան չի անում եթե չհայտնի Իր խորհուրդը Իր ծառաներին՝ մարգարեներին»։ Ասաց. «Անձրևի մի կաթիլ էլ չի լինի»։ Առաջինը նա…

64 Նրանք ծաղրում էին նրան, մտածում էին, թե նա խելագար է, «այդ ֆանտիկը»։ Բայց տեսնում եք, նա ուներ ԱՅՍՊԵՍ Է ԱՍՈՒՄ ՏԵՐԸ խոսքը, որ անձրև չի գալու։ Եվ Աստված, մինչ այդ ասելը, հայտնել էր դա Իր ծառա Եղիային։ Եվ ինքը հաստատված, ապացուցված մարգարե էր, ուստի մարդիկ պետք է ապաշխարեին։ Բայց դրա փոխարեն, նրանք ծաղրում էին նրան և ասում. «Ո՜հ, մենք բավական անձրևաջուր ուենք։ Ջրամբարները լցված են։ Գետերը առատորեն հոսում են»։

65 Աստվածաշունչն ասում է, որ՝ «Նույնիսկ ցող չեղավ երեք տարի և վեց ամիս շարունակ»։ Ամենուր բոլոր հեղեղատներն ու ջրերը ցամաքել էին։ Ոչ թե մարդը, այլ Աստված էր խոսել այդ մարդու միջոցով։ Դա «ԵՍ»–եմն էր։ Մենք միշտ դա գիտենք։ Այսպիսով նա…

66 Այսպիսով, երբ մարդ գալիս է, ուղարկված Աստծուց կողմից, սահմանված Աստծուց, և ունի իսկական «ԱՅՍՊԵՍ Է ԱՍՈՒՄ ՏԵՐԸ» խոսքը, պատգամն ու պատգամաբերը մեկ են դառնում։ Որովհետև նա ուղարկվել էր ներկայացնելու «ԱՅՍՊԵՍ Է ԱՍՈՒՄ ՏԵՐԸ», Խոսք առ Խոսք, դրա համար նա և իր պատամը մեկ են։

67 Հարանվանական մարդը հարանվանական հովանու ներքո, ինքն ու եկեղեցին «մեկ» են։ Մի աստվածաբան որևէ հարանվաության կողմից ստեղծված աստվածաբանության ներքո, նա և իր պատգամը մեկ են. աստվածաբանության եկեղեցի, աստվածաբան։ Դա ճիշտ է։

68 Հետո, երբ մի մարդ գալիս է «ԱՅՍՊԵՍ Է ԱՍՈՒՄ ՏԵՐԸ» խոսքով, նա և Պատգամը մեկ են։ Եվ երբ Եղիան եկավ «ԱՅՍՊԵՍ Է ԱՍՈՒՄ ՏԵՐԸ» խոսքով, նա և Պատգամը մեկ դարձան։ Ճիշտ այնպես, ինչպես Հիսուսը,

երբ Նա եկավ, Ինքը Խոսքն էր, Հովհաննու Ավետարան առաջին գլուխ։ Այսպիսով, Աստծո Խոսքը և տվյալ ժամանակաշրջանի համար ուղարկված պատգամաբերը միշտ մեկ են։ Դա ճիշտ է։

69 Հիսուսը Խոսքն էր, որի մասին մարգարեցված էր։ Նրա մասին էին հաղորդել մարգարեները. «Կույսը կհղիանա և որդի կծնի»։ Դեռ սկզբում Աստված ասել էր նրանց, ասել էր. «Կնոջ սերունդը ջախջախելու է օձի գլուխը, և օձը խայթելու է նրա գարշապարը»։ Այս բոլոր մարգարեությունները տրված էին։ Դավիթն աղաղակում էր, բոլոր մարգարեները ողջ դարերի ընթացքում խոսել են Նրա մասին։ Նա բացահայտված Խոսքն էր։ Ալելո՜ւիա։

70 Հասկանո՞ւմ եք, թե ուր եմ ուզում հասնել։ Այս առավոտ պարզ խոսեցի ձեզ հետ։ Մի՞թե չեք տեսնում կենդանի Աստծո իշխանությունը կենդանի եկեղեցում՝ Հարսի մեջ։ Հիվանդները բժշկվում են, մեռելները հարություն են առնում, կաղերը քայլում են, կույրերը տեսնում, Ավետարանը առաջ է շարժվում զորությամբ, որովհետև Պատգամն ու պատգամաբերը մեկ են։ Խոսքը եկեղեցու մեջ է, մարդու մեջ։

71 Աստծո Խոսքը Եղիայի մեջ էր, երբ նա բարձրացավ այնտեղ «ԱՅՍՊԵՍ Է ԱՍՈՒՄ ՏԵՐԸ» խոսքով, և ասաց. «Անձրև չի գալու»։ Դա Եղիան չէր, այլ Աստված Եղիայի մեջ։

72 Ես բազմիցս պատմել եմ «Քրիստոնեական գիտությանը» պատկանոց մի կնոջ մասին, ով մի անգամ ինձ ասաց։ Բազմիցս եմ պատմել դրա մասին։ Նա ասաց. «Պարո՛ն Բրանհամ, դուք չափազանց մեծ կարևորություն եք տալիս Հիսուսին»։

Ես ասացի. «Հուսով եմ՝ դա միակ բանն է, որի համար պատասխան պետք է տամ»։

— Դուք փորձում եք Նրան աստվածացնել։

— Նա իրոք աստվածային էր։

73 — Ո՛հ, Նա մարգարե էր, լավ մարդ էր, բայց աստվածային չէր։

74 — Լավ, ցույց տվեք ինձ սուրբգրային մի հատված, որն ասում է, որ Նա Աստված չէր։

75 — Հովհաննեսի Ավետարանում գրված է, որ Նա «լաց եղավ» Ղազարոսի գերեզմանի մոտ։

76 «Դե, ասացի ես, անշուշտ, Նա լաց եղավ։ Նա և՛ մարդ էր, և՛ աստվածային։ Նա մարդ էր գերեզմանի մոտ լաց լինելիս, բայց պետք է Աստված լիներ մեռածին հարություն տալու համար»։ Ճիշտ է։ Ես ասացի. «Նա մարդ էր, երբ սովից տանջվում էր, բայց Աստված էր, երբ հինգ հացաբլիթով և երկու ձկով հինգ հազար հոգու կերակրեց»։ Դա ճիշտ է։ «Նա մարդ էր, երբ պառկած էր նավի հետնամասում, բայց Աստված էր Նրանում, որ կարողացավ ջրերը հանդարտեցնել»։ Ինչո՞ւ։ Որովհետև Նա և Իր պատգամը մեկ էին։

77 Նա ասաց. «Ես և Իմ Հայրը մեկ ենք։ Իմ Հայրը բնակվում է Իմ մեջ»։ Նա էր Աստվածության ամբողջ լիությունը՝ մարմնապես։

78 Մի օր, *Եկեղեցու յոթ շրջանները* քարոզելիս մի ցնցող բան նկատեցի։ Սկզբում, ես, ես չէի հասկանում, թե ինչպես Հիսուսը կանգնած էր այնտեղ այդ…սպիտակ մազերով, որտեղ ասվում էր. «Նրա մազերն բրդի պես ճերմակ էր»։ Ես չէի հասկանում, թե ինչպես 33 տարեկան մարդը կարող է ձյան պես ճերմակ մազեր ունենալ։

79 Ես զանգահարեցի մի աստվածաբանի՝ հոգեգալստական աստվածաբանի, սիրելի բարեկամ է։ Դա Ձեք Մուր եղբայրն էր։ Նա խելացի և ինտելեկտուալ մարդ է։ Նա ասաց. «Բրանհամ եղբայր, դա փառավորված Հիսուսն էր։ Այդպիսին պետք է լիներ Նրա տեսքը փառավորվելուց հետո»։ Ոչ, ես չէի կարողանում դրան հավատալ։ Ոչ։

Ես, ես, ես ասացի. «Լավ, եղբայր Մուր, շնորհակալություն»։

80 Ես մտա իմ սենյակը Աստծո հետ խոսելու համար։ Համաբարբառի մեջ հանդիպեցի Դանիելի գրքի մի հատվածի, որտեղ ասվում է. «Հինավուրցը նստեց, Նրա գլխի մազը բրդի պես ճերմակ էր»։ Ես ասացի. «Տե՛ր, ես, ես, ես չգիտեմ, թե ինչ ասեմ, բայց պատասխանատվություն ունեմ»։ Հիմա, դա նախքան…և հիշեք, յոթ Կնիքները բացվելուց առաջ էր, մոտ մեկ տարի առաջ, կա դրանից ավելի։ Ես այնտեղ աղոթում էի. «Տե՛ր, ի՞նչ էր դա»։

81 Ես նայեցի, իմ առջև կանգնած էր, ահա մի մարդ էր կանգնած և նա դատավոր էր, ու սպիտակ կեղծամ էր կրում։ Հնում դատավորները սպիտակ կեղծամ էին կրում՝ որպես գերագույն իշխանության նշան։

82 Հետո, երբ ես տեսա Հիսուսին սպիտակ կեղծամով, ասացի, որ դա միայն ապացուցում է այն ճշմարությունը, որը մենք գիտենք, այն է, որ Նա է գերագույն իշխանությունը: Աստված նույն բանը վկայեց Այլակերպության լեռան վրա, երբ ասաց. «Սա է Իմ սիրելի Որդին, Նրան լսեք, գերագույն իշխանությունը»:

83 Դեռ սկզբում, Յոթը Կնիքների բացումից առաջ, երբ այդ յոթ Հրեշտակները իջան այդ բուրգի տեսքով, կանգնեցին այնտեղ և ինձ ասվեց վերադառնալ Զեֆերսոնվիլ և քարոզել Յոթը Կնիքների վերաբերյալ, և Նա ինձ հետ կլինի և ցույց կտա ինձ, թե ինչ են նշանակում բոլոր այն բաները, որ բաց են թողնված: Ես միշտ կարծում էի, որ այն, ինչ կնքված էր Գրքի հակառակ կողմում, գրված չէր Գրքում, բայց պարզվեց, բացահայտվեց, որ այդպես չէր կարող լինել: Դա լրացուցիչ գրվածք չէ, որ չկա Գրքում...այլ այն, ինչ թաքնված է եղել Գրքի մեջ: «Որովհետև ով որ սրանից մի Բառ պակասեցնի կամ մի բառ ավելացնի...»: Ուստի սա խորհուրդ է, որ թաքնված էր Գրքում եկեղեցու այս յոթ ժամանակաշրջաններում: Նրանցից ամեն մեկը խորհուրդ է բացահայտում, օրինակ, ջրի մկտրության և այլ բաների վերաբերյալ, որ նրանք այդքան երկար ժամանակ շփոթեցնում են:

84 Հետո, երբ ամպը բարձրացավ, Կալիֆորնիայի, Մեքսիկոյի և Թուսոնի դիտարանները, ամեն տեղից լուսանկարեցին դա: Դա խորհրդավոր նշան էր: Ֆրեդ Սոտման եղբայրը այնտեղ է, նստած է խորքում, Ջին Նորման եղբայրը և ես կանգնած էինք այնտեղ, ներկա էինք, երբ ամպը բարձրացավ: Նրանք լուսանկարեցին, բայց չգիտեն, թե դա ինչ է: Վերջերս բոլորն ասում էին. «Նայե՛ք: Ամպը նման է *այս* բանին, այն բանին, և Հրեշտակների թևերը, տեսեք, թե ինչպես են դրանք ծալված»:

85 Մի օր, երբ նայում էի նկարը, մի քիչ աջ թեքեցի և իմ առջև տեսա Հիսուս Քրիստոսի դիմանկարը, որ նկարել էր Հոֆմանը: Նա կանգնած էր այնտեղ սպիտակ կեղծամով, հայացքն ուղղած դեպի երկիր՝ աշխարհին, ցույց տալով, որ Ինքն է գերագույն իշխանությունը: Երկինքը, Աստվածաշունչը, Պատգամը՝ բոլորը միասին հռչակում են դա: Գերագույն Իշխանություն սպիտակ կեղծամով. ներքևում երևում է նրա սև մորուքը: Ձեզանից շատերը տեսել են այդ նկարը: Մենք այնտեղ ունենք այդ լուսակարը: Պարզապես աջ կողմից թեքեք այն ներքև

և նայեք դրան։ Եվ ահա Նա, այնքան կատարյալ է, կարծես լուսանկար լինի։ Նրանք սխալ անկյունից են դրան նայում, պետք է ճիշտ ակնյունից նայեք։ Եվ միայն Տեր Աստվածը կարող է հայտնել, թե ճիշտ անկյունը որն է։ Թեքե՛ք աջ և նայեք։ Ահա Նա, այնքան կատարյալ, և դա լուսանկարված է եղել այնտեղ։

86 Առաջին անգամ, երբ Նրան տեսա, Նա այնպիսին էր, ինչպես Հոֆմանի «*...դեմքը*»։ Ես նախկինում երբեք չէի տեսել դա։ Շատ տարիներ հետո տեսա այդ նկարը Բիլլի Սանդիի խորանում։ Այդ օրվանից այդ նկարներից մեկը միշտ փակցված է իմ տանը։

87 Հետո, ահա նորից երկնքում հայտնվեց նույն Աստվածը, ում տեսել էի տեսիլքում դեռ փոքր ժամանակ այստեղ, որտեղ հիմա դպրոցի շենքն է։ Երեսուներեք տարի հետո Նա երկնքում հաստատում է, որ դա ճշմարտություն է։ Այդպիսին է Նրա կերպարանքը։ Դա ինչ–որ մեկի միստիկ գաղափարի պատկերացումը չէ։

88 Ինչպես Վատիկանում։ Նրանք այնտեղ մի նկար ունեն, որն իբր ներկայացնում է Քրիստոսին. մի փոքրիկ սպիտակ մորուքով կամ մորուքի օղակով կզակի շուրջը, մոտ կես դյույմ երկարությամբ, որը հասնում է Նրա բերանի վերևին, և *նման* բաներ, և դա կոչում են Քրիստոս։

89 Դա ինձ հիշեցրեց այն, ինչ մի օր տեսա մի հին տաճարում. մի հույն նկարիչ նկարել էր Ադամն և Եվան և նրանց ինչ–որ գազանային տեսք էր տվել։ Այդպես է մարմնավոր միտքը հասկանում հոգևոր բաները։ Ես կարծում եմ, որ Ադամը եղել է երբևէ ապրած տղամարդկանցից ամենագեղեցիկը, իսկ Եվան կատարյալ է եղել ամեն տեսանկյունից։

90 Մարմնավոր միտքը ամեն բան փաթաթում է իր սեփական գաղափարների մեջ, այդ ժամանակ Աստված ուղարկում և բացահայտում է այդ բաներն Իր զորությամբ։ Հենց դա կատարվեց այնտեղ Աքաաբի օրերում։

91 Հիմա, մենք պարզեցինք, որ Եղիան կարողացավ ասել դա, որովհետև ժամի Պատգամը և Աստծո Խոսքը, ավելի ճիշտ՝ պատգամաբերը, Պատգամը, Պատգամը և Խոսքը լիովին նման էին։ Մարգարեն, Խոսքը, Պատգամը. պատգամաբերը, Պատգամը, և Պատգամը նման էին։ Հիսուսն ասաց. «Եթե Ես չեմ կատարում այն, ինչ գրված

է Իմ մասին, ուրեմն Ինձ մի՛ հավատաք»։ Դա լավ է։ Ցանկացած մարդը և իր պատգամը մեկ են։

92 Դրա համար այսօր չեն հավատում Աստծո արած գործերին, որովհետև չեն ընդունում Աստծո Պատգամը։ Նրանք չեն հավատում Պատգամին։

93 Բայց նրանց համար, ովքեր հավատում են Աստծո ժամին, որում մենք ապրում ենք, այս բաները «պահված կերակուր» են։ Պարզապես մտածե՛ք, Աստված այնպես է դա թաքցրել, որ նրանք նայում են դրան և չեն տեսնում։ Այդպես էլ Եղիան կուրությամբ զարկեց սիրիական բանակը։ Նույն ձևով էլ Աստված է կուրացնում անհավատներին, և նրանք չեն տեսնում երեխաների՝ հավատացյալների իսկական և ճշմարիտ կերակուրը։

94 Նոյին «ֆանատիկ» էին համարում, որովհետև տապան էր կառուցում, բայց նրա աչքերը բաց էին Աստծո Խոսքի և խոստումի համար։ Այն, ինչ նրանք ֆանատիզմ էին համարում, փրկեց Նոյին և իր ընտանիքը։ Տեսնում եք, հենց դա։ Այն բաները, որ մարդիկ ծաղրում են, մենք հենց դրանց համար ենք աղոթում։ Այն, ինչ մարդիկ «անմիտ» են համարում, մեզ համար «փառավոր» են։ Այն, ինչ աշխարհը «մեծ» է համարում, Աստված համարում է «անմիտ»։ Եվ այն, ինչ աշխարհը «անմիտ» է համարում, Աստված համարում է «փառավոր»։ Դա ճշմարիտի և կեղծի հակադրությունն է։ Հիսուս Քրիստոսը նույնն է երեկ, այսօր և հավիտյան։

95 Հիշեք. նա եկավ իր գաղտի վայրը Աստծո ձրագրի, Աստծո կանչի և Աստծո Խոսքի համաձայն։ Եղիան մտավ Իր գաղտնի վայրը Աստծո կանխագիտությամբ, ձրագրի, կյանքի կոչման և Խոսքի համաձայն։ Եթե մենք այդ ճանապարհով չենք մտել, չգիտեմ, թե ինչպես կհասնենք այնտեղ։

96 Ուշադրությո՛ւն դարձրեք, որ երախտը սկսելուց առաջ Եղիան եկավ այս գաղտնի վայրը իր կյանքը փրկելու համար։ Ճիշտ խորհրդապատկերն է դատաստանը սկսելուց առաջ երկիրը զարկելուն, Եկեղեցին արդեն դուրս է կանչված, Հարսը արդեն ընտրված է, և պարզապես սպասում է մինչ դատաստանը կհասնի երկրին։ Նա արդեն սպասում է՝ ուտելով Աստծո տրված կերակուրը և ուրախանալով Նրա օրհնություններով։ Ամեն ողջամիտ մարդ գիտակցում է, որ մենք հասնում ենք ճիշտ դատաստանի ժամին։

97 Նայե՛ք: Եղբայր Բենքսը, այս երեկո այստեղ գտնվող ձեզանից մի քանիսը, ովքեր կանգնած էին այդ առավոտ այն սարի վրա:

98 Եթե Տերը կամենա, եկող կիրակի առավոտյան ես ուզում եմ խոսել այդ սարի մասին: Մի մեծ հայտնություն է ինձ տրվել, և հազիվ եմ ինձ զսպում, որ այս երեկո չպատմեմ: Բայց ես ունեմ...Հասկանո՞ւմ եք: Դա անընդհատ մեկը մյուսի հետևից է կատարվում: Հասկանո՞ւմ եք: Այս երբեք չի դադարի տեղի ունենալ, որովհետև սա ԱՅՍՊԵՍ Է ԱՍՈՒՄ ՏԵՐՆ ԷՐ:

99 Այստեղ գտնվող ձեզանից ամեն մեկը, հազարավոր անգամներ ձայներիզների վրա լսել է, որ ես կանգել և ասել եմ. «ԱՅՍՊԵՍ Է ԱՍՈՒՄ ՏԵՐԸ, *այս* կամ *այն* բանը կկատարվի»: Եվ նույնիսկ լրագրերն ու ամսագրերն են այդ հաստատել: Նրանք չեն հասկանում, թե ինչ է դա, բայց տեսել են: Նրանք չգիտեն, թե ինչ է դա, բայց տեսան, որ դա Խոսքը դարձրեց բացարձակ ճշմարտություն:

100 Երբ մենք կանգնած էինք այնտեղ՝ գետում, երբ այն օրը Տիրոջ Հրեշտակն իջավ, երեսուն երեք տարի, այսինքն դա 1933 թվականին էր, իջավ և խոսեց այն բաների մասին, որոնք Նա արել էր: Դուրս եկանք, և գետափին կանգնածներից շատերը հարցնում էին. «Ի՞նչ է նշանակում դա, Բի՛լլի»:

101 Ես ասացի. «Դա ոչ թե ինձ, այլ ձեր համար էր: Ես հավատում եմ, իսկ դուք՝ ոչ», և ուղղակի գնացի:

102 Հետո հովիվն ինձ ասաց, նա ասաց. «Ուզում ես ասել, որ դու քո յոթամյա կրթությամբ կգնաս ամբողջ աշխարհով մեկ և կաղոթես միապետների, տիրակալների, թագավորների և ուրիշների համա՞ր: Ո՛հ,— ասաց,— մոռացի՛ր դրա մասին»:

103 Բայց ես չէի կարող մոռանալ, դա գրված էր իմ սրտում: Երեսուն երեք տարի հետո այն ամենը, ինչ Նա ասել էր կատարվեց ճիշտ այնպես ինչպես ասել էր: Նա Աստված է և չի կարող սխալվել: Նա միշտ պահում է Իր Խոսքը: Նա... Երբեք դրանում չկասկածեք:

104 Հիմա, նկատե՛ք, Եղիան գնաց այնտեղ Աստծո ձրագրով (կանխագիտությամբ), Աստծո կանչի և Աստծո Խոսքի համաձայն, և մտավ նախքան երաշտի սկսելը:

Հիմա, մենք գիտենք, որ դատաստանը մոտ է:

105 Այդ օրը մենք կանգնած էինք սարի վրա, եղբայր Բենքս Վուդն այստեղ ներկա է, մենք սարով բարձրանում

էինք: Գուցե ես դա նորից մեջբերեմ, որ դա բարձրացնի ձեր հավատքը հաջորդ տաս-տասնհինգ րոպեների ընթացքում աղոթքի շարքն ունենալուց առաջ: Ես քայլում էի Բենքս եղբոր առջևից: Նա...Կարծեմ, նա քույր Ռուբիին թողել էր տանը, քանի որ հիվանդ էր: Եվ երբ նա գալիս էր իմ հետևից, նկատեցի, որ նրա դեմքը կարմիր է: Հետ նայեցի: Մտածեցի, որ գուցե դժվարանում է բլուրը բարձրանալիս, դրա համար սկսեցի դանդաղ գնալ: Հենց այդ ամայի վայրերում, հենց *այդպիսի* բլուրներին էր, որ Տիրոջ Հրեշտակները հայտնվեցին: Մենք առաջ էինք գնում այդ ուղղությամբ, որտեղ մի քանի ամիս դրանից առաջ Նրանք հայտնվել էին:

106 Եվ երբ բլուրով բարձրանում էի, Աստծո Հոգին...Երբ շրջվեցի, նայեցի բլրի գագաթին: Նա ասաց. «Վերցրո՛ւ այդ քարը և ասա՛ նրան. «ԱՅՍՊԵՍ Է ԱՍՈՒՄ ՏԵՐԸ. մոտակա ժամերին կտեսնես Աստծո փառքը»:

107 Ես վերցրի քարը և ասացի. «Եղբա՛յր Բենքս, չգիտեմ, թե ինչու», և քարը օդ նետելով՝ ասացի. «ԱՅՍՊԵՍ Է ԱՍՈՒՄ ՏԵՐԸ, դու կտեսնես Աստծո փառքը»:

Նա ասաց. «Դա նկատի ունե՞ր Ռուբիին»:

108 Ես ասացի. «Ոչ, չեմ կարծում, որ դա վերաբերում էր ձեզ՝ Բենքս կամ Ռուբի, ձեզանից որևէ մեկին: Կարծում եմ, դա պարզապես ասվեց. «ԱՅՍՊԵՍ Է ԱՍՈՒՄ ՏԵՐԸ, ինչ-որ բան է կատարվելու»»:

109 Հաջորդ առավոտ, երբ մենք կանգնած էինք այնտեղ, տղամարդկանցից շատերը, չգիտեմ, քանիսն են նստած հիմա այստեղ, տասներկու թե տասնչորս, տասնհինգն էին նստած այնտեղ: Հանկարծ մի ծառայող մոտեցավ ինձ և ասաց. «Եղբա՛յր Բրանհամ,— ասաց նա,— իմ անունը *այսինչ, այնինչ է»:* Ասաց. «Ես ձեր հովանավորներից մեկն եմ եղել Կալիֆոռնիայում»:

110 Ես ասացի. «Ուրախ եմ ձեզ հետ ծանոթանալու համար, պարոն»: Դուգլաս Մակիյուզ: Նա ասաց. «Ես...»: Ես ասացի. «Ուրախ եմ ձեզ հետ ծանոթանալու համար»: Ես սեղմեցի նրա ձեռքը:

111 Նա ասաց. «Ուզում եմ ձեզ մի հարց տալ»: Ասաց... Ռոյ Ռոբերսոնը՝ հոգաբարձուն, այստեղ է. եղբայր Վուդը, Թերին, Բիլլը, և, ո՛հ, եղբայր Մականալին, և չգիտեմ բոլոր նրանց, ովքեր այնտեղ էին: Եվ ես...Նա ասաց. «Ուզում եմ ձեզ մի բան հարցնել»: Նա ասաց. «Տերը ձեզ այստե՞ղ էլ է տեսիլքներ տալիս»:

112 Ես ասացի. «Այո, եղբայր, բայց ես այստեղ եկել եմ մի քիչ դրանից հեռու մնալու, հանգստանալու համար»։

Եվ ես *այսպես* շրջվելով տեսիլքի մեջ տեսա ծանրակշիռ մի բժշկի, որը զննում էր նրան և ասում. «Պատվելի Մակիյուզ, ձեր աչքում եղած ալերգիայի պատճառով կկորցնեք այս աչքի տեսողությունը։ Ես ձեզ բուժել եմ երկու տարի, և այլևս ոչինչ չեմ կարող ձեզ համար անել»։

Ես շրջվեցի նրա կողմը։ Ասացի. «Այն, ինչ դուք ուզում էիք ինձ հարցնել, օրերս բժիշկն ասել է ձեզ. «Դա ձեր աչքում եղած ալերգիան է»։ Կեսօրին մոտ էր՝ ժամը տասնմեկի կողմերը, և նա արևային ակնոցով էր։ Ես ասացի. «Դուք արևի պատճառով չեք ակնոց կրում, այլ ձեր աչքի պատճառով։ Բժիշկն ձեզ ասել է, որ «ձեր այդ աչքը կորցնելու եք»։

Եվ նա սկսեց լաց լինել, ասաց. «Դա ճիշտ է»։

113 Ես շրջվեցի, որ նորից գնամ, ձեռքիս բահ էր։ Նայեցի, տեսա, որ նա կանգնած՝ իմ առջև և բոլորովին պարզ հայացքով նայում է ինձ։ Ես ասացի. «Բայց ԱՅՍՊԵՍ Է ԱՍՈՒՄ ՏԵՐԸ. դուք չեք կորցին ձեր տեսողությունը»։ Այս աշնանը որսորդության էի գնացել նրա հետ, և նա ինձանից էլ, ուրիշներից էլ լավ էր տեսնում։ Նա երբեք…

114 Ես նաև տեսա տարեց մի կնոջ, որը հանում է գուլպաները և շրջազգեստի փեշը բարձրացնում է։ Նա ասում է. «Որդի՛ս, եթե Բրանհամ եղբորը տեսնես, ասա նրան, որ աղոթի իմ ոտքերի համար»։ Ես տեսա փոքր… կարծես նրա ոտքերը ծածկված լինեին ուռուցքներով։

115 Ես ասացի. «Ձեր մայրը սպիտակ մազերով կին է»։ «Որդի՛ս», տեսնում եք։ Ձեր գնալուց առաջ ասել է, որ եթե ինձ տեսնեք, խնդրեք, որ աղոթեմ նրա ոտքերի համար. դրանք պատված են մանր ուռուցքներով»։ Քիչ էր մնում ուշաթափվեր։

Ասաց. «Դա ճիշտ է»։

Ես ասացի. «Ասեք, որ այլևս չանհանգստանա։ Ամեն ինչ լավ կլինի»։

116 Ես շարունակեցի ճանապարհս։ Այդ ժամանակ լսեցի Աստծո Ձայնը, որն ինձ ասաց. «Արագ դուրս արի ճանապարհից»։

Ռոյ Ռոբերսոնն այնտեղ էր, իմանալով, որ նա պատերազմի վետերան է, ես ձեռքս դրեցի նրա ուսին և ասացի. «Եղբա՛յր Ռոյ, թաքնվիր արա՛գ»:

Ասաց. «Ի՞նչ է կատարվում»:

Ես ասացի. «Դո՛ւրս արի ճանապարհից: Թաքնվի՛ր»:

117 Մինչ նա փախչում էր, ես դրեցի բահը, հետո նորից շրջվեցի, հանեցի գլխարկս: Եվ ահա Նա եկավ, Աստծո փառքը իջավ պտտահողմի մեջ, որը սարի կողքի ժայռից մեծ կտոր պոկեց, և պայթեցրեց ու այսպես ցնցեց այդ վայրը, կտրեց թփուտների ծայրերը. մոտ երեք թե չորս, հինգ ոտնաչափ բարձրության վրա պտտվում էր իմ գլխավերևում: Այնուհետև պտտահողմը բարձրացավ ձագարի նման, և նորից պայթեց: Եվ դա կրկնվեց երեք անգամ:

118 Հետո, երբ երկրաշարժը դադարեց, երրորդ անգամից հետո Բենքս եղբայրը եկավ ինձ մոտ և ասաց. «Սրա՞ մասին էիր ասում»:

Ես ասացի. «Այո»:

Ասաց. «Ի՞նչ էր դա նշանակում»:

119 Ես ասացի. «Աստված հայտնվում է պտտահողմի մեջ»: Ես չգիտեի, թե արդյոք Նա ուզում էր, որ դրա մասին պատմեմ մարդկանց, թե ոչ:

120 Հետո ես անցա և աղոթեցի: Այդ ժամանակ Նա ինձ թույլ տվեց, որ պատմեմ: Ես ասացի. «Սա դատաստանն է, որ հարվածում է արևմտյան ափը»: Նայե՛ք դրան այսօր: Տեսե՛ք, թե ինչ կատարվեց դրանից մի քանի ժամ հետո. Այլասկան սուզվում է: Եվ հիմա ողջ ափը սուզվում է ջրի տակ է: Մենք հասնում ենք դատաստանին: Ծնորհքը մերժվել է:

121 Բայց գոհություն Աստծուն, մենք ունենք պահված կերակուր՝ հոգևոր կերակուր, որ այս վերջին օրերում մենք ապրում ենք Հիսուս Քրիստոսի բարության, ողորմության և հայտնության մեջ, ով դրսևորում է Իրեն Իր ժողովրդի մեջ: Ամե՛ն: Նրանք ներս մտան: Եղիան մտավ մինչև երաշտի սկսելը: Գոհություն Աստծուն, մենք էլ կհափշտակվենք մինչև դատաստանի սկսվելը: Հիմա դուրս գալու և մտնելու ժամանակն է. կազմակերպություններից դուրս գալու և Քրիստոսի մեջ մտնելու, դուրս գալու և մտնելու ժամանակն է բոլոր ճշմարիտ հավատացյալների համար:

122 Հետո նա կանչվեց և մնաց այնտեղ: Հիշեք. Եղիան երբեք չլքեց այդ հեղեղատը, մինչև Աստված կանչեց իրեն:

123 Եվ երբ երաշտը հասնում էր իր ավարտին, այնտեղից Նա նրան առաջնորդեց մի այրու տուն: Ուշադրությո՛ւն դարձրեք, Նա տարավ նրան այդ այրու մոտ: Այս այրին չէր միաբանվել անհավատների հետ, որոնք երաշտի ժամանակ ընդունեցին գազանի դրոշմը: Այսպես, Նա կանչեց այդ կնոջը…կանչեց Եղիային՝ այդ այրուն օգնելու համար: Նրանք ունեին ընդամենը մի փոքրիկ նկանակ, մի փոքրիկ բան, որից նա կառչել էր: Եղիան ասաց նրան. «Նախ ինձ տուր դա: Քանի որ ԱՅՍՊԵՍ Է ԱՍՈՒՄ ՏԵՐԸ. Այյուրը չի պակասելու սափորում, և կժի յուղը չի նվազելու մինչև այն օրը, երբ Տեր Աստվածն անձրև տեղացնի երկրի վրա»: Աստծուն և Իր Խոսքը առաջին տեղում դնելով:

124 Ուշադրությո՛ւն դարձրեք, սափորում այյուր կար: Ամեն անգամ, երբ նա գնում էր այյուրի հետևից, այյուր կար սափորում: Կուժի մեջ յուղ կար, ամեն անգամ, երբ նա գնում էր այն բերելու: Ինչո՞ւ: Այյուրը ներկայացնում է Քրիստոսին հացի ընծայով: Ջրաղածը պետք է ճիշտ տեղադրված լինի, որ բոլոր հատիկները նույ ձևով աղվեն: Այս այյուրի յուրաքանչյուր հացահատիկը նույնն է, ցույց տալով, որ Հիսուսը նույնն է երեկ, այսօր և հավիտյան: Դա Խոսքն էր, Կյանքի Հացը, որը հետևում էր պատգամին՝ հաստատելու համար Խոսքը:

125 Նույնն էլ այսօր է, բարեկամներ: Նույնն էլ այսօր է, որ Կյանքի Հացը, որ երեխաները ուտում են, հետևում է Աստծո Պատգամին, որպեսզի նրանց զորացնի երաշտի ժամանակ: Ի՞նչ կլիներ, եթե Նա այսօր կանգնած լիներ մեր մեջ: Ի՞նչ կլիներ, եթե Նա հենց հիմա կանգնած լիներ մեր մեջ: Նա կգործեր նույն կերպ և կաներ նույն բաները, ինչ որ անում էր այն ժամանակ, երբ մարմնով այստեղ՝ երկրի վրա էր: Հարսը Փեսայի մի մասն է, Եկեղեցին նման է Քրիստոսին: *«Այն գործերը, որ Ես եմ անում, դուք էլ կանեք»:* Եվ Խոսքն է դրանք իրականացնում: Նա է մեզ ասել, որ այն բաները, որ Ինքն արել է, մենք էլ կանենք:

126 Նորից նկատենք, որ եթե Խոսքը մեր մեջ է և հասել է մեզ, այնպես ինչպես Եղիայի ժամանակ էր, կանի այն նույն բաները, որ նա արեց, նա կերակրելու է Աստծո պահած բաներով, որոնք ծածկված են աշխարհից: Ո՛հ: Նորից դա Պատգամը և պատգամաբերին մեկ է դարձնում: Հոգևոր կերակուրը պատրաստ է, և հիմա ճիշտ ժամանակն է: Եվ ձեզանից յուրաքանչյուրը կարող

է ստանալ այդ կերակուրը, եթե ուզենաք, եթե կամենում եք հեռանալ ամեն անհավատությունից հենց այս ժամին, եթե պատրաստ եք մտնել Քրիստոսի, Նրա խոստումի մեջ:

Հիշեք. Նրա խոստումները Մաղաք. 4, Ղուկ. 17:30, և Հովհ. 14:12 մեջ, և էլ ավելի շատ սուրբգրային համարներ կան, որոնք հաղորդում են դրանց մասին, Հովհել 2:38, և այն ամենը, ինչ Նա անելու է, ավելի ճիշտ՝ 2:28, այն, ինչ Նա անելու է այս վերջին օրերում: Եվ ինչպես մարգարեն հայտնում է, որ վերջին օրերում Լույս կլինի, թե ինչպես է այն գործելու, ինչ է անելու, բոլոր Գրքերը մատնանշում են այս վերջին օրերը: Եվ դա Քրիստոսն է: Եթե դուք կարող եք հիմա թաքնվել այդ գաղտնի վայրում, կուտեք և կտեսնեք Աստծո շնորհքն ու ողորմությունը: Եթե դուք հիվանդ եք, այնտեղ բժշկություն կա:

127 Դուք հիշում եք, երբ Եղիսեն, ավելի ուշ, իջեցրեց... Այն բանից հետո, երբ ընդունեց հացի ընծան, որը Քրիստոսի խորհրդապատկերն է, և որով պահեց այրու տունը: Ուշադրությո՛ւն դարձրեք, ավելի ուշ, երբ նա կրակ իջեցրեց երկնքից և այլն, և ապացուցեց Աստծո կողմից իր ուղակված լինելը, մարգարեի Հոգին:

128 Ուշադրությո՛ւն դարձրեք, անապատում, երբ նա պառկած էր գիհու տակ, Հրեշտակը իջավ նույն կերակուրով, և մի քանի նկանակ շինեց և կերակրեց նրան: Որոշ ժամանակ անց նա նորից քնեց, Հրեշտակը արթնացրեց նրան, և նա կերավ մի քիչ ավելի շատ նկանակներ թխված իր համար: Նա այդ նկանակներով ուժ հավաքեց քառասուն օրվա համար: Փա՜ռք Աստծուն: Նա նույնն է երեկ, այսօր և հավիտյան: Ո՛հ, ինչքա՜ն ենք Նրան սիրում: Հոգևոր կերակուրը ճիշտ ժամանակին:

129 «Լավ չէ երեխաների հացն առնել ու շներին գցել»: Մի՞թե Հիսուսը նույն բանը չասաց փյունիկեցի կնոջը: Ինքն ուղարկվել էր Իրենների մոտ: Դա ճիշտ է: Ահա, թե ում մոտ էր Նա եկել...Նա երբեք չգնաց հեթանոսների մոտ:

130 Բայց հիմա Նա այցելում է հեթանոսներին իրենց ժամանակում, և լավ չէ...

131 Դուք ասում եք. «Ինչո՞ւ այս Պատգամը չի քարոզվում այս մեծ վայրերում, խոշոր հավաքներում, հարանվանությունների շրջանում»:

132 Դա նրանց կերակուրը չէ: Դա այսպես կոչված եկեղեցու կերակուր չէ: Սա Հարսի կերակուրն է: Սա հոգևոր կերակուրն է հարմար ժամանակին: Դա

մարսողական խանգարում կառաջացներ նրանց մոտ: Այս կերակուրը չափազանց սննդարար է նրանց համար: Հասկանո՞ւմ եք: Ըմբռնո՞ւմ եք: Դուք, դուք, դուք չեք կարող դա անել: Բայց երեխաների համար սա Հացն է, Կյանքն է, Հիսուս Քրիստոսն է, որ նույնն է երեկ, այսօր և հավիտյան:

133 Եթե հիմա չսկսենք աղոթքի շարքը, չափազանց ուշ կվերջացնենք, դրա համար եկե՛ք մի պահ խոնարհենք մեր գլուխները:

134 Սիրելի՛ Աստված, ճիշտ ժամանակի համար տրված կերակուրը, հոգևոր կերակուրը: Այն, ինչի մասին աշխարհը ոչինչ չգիտի: Ինչպես մենք լսում ենք, որ մեր Տերն ասաց այն գիշեր կամ այն օրը Սամարիայում, այդ նույն վայրում, որտեղ Եղիսեն քայլեց և ասաց. «Ցող էլ չի իջնի առանց իմ խոսքի»: Հիսուսը կանգնած էր այնտեղ և զրուցում էր Իր աշակերտների հետ:

Ասացին. «Վարդապե՛տ, ինչո՞ւ չես ուտում»:

Նա ասաց. «Ես կերակուր ունեմ ուտելու, որ դուք չգիտեք»:

135 Իսկապես, Տե՛ր, Նրա կերակուրը Աստծո կամքը կատարելն էր, տեսնել Աստծո գործերը դրսևորված Նրա ժամանակին: Նա այնտեղ էր, որ հսկեր դրանց իրագործումը: «Ես ոչինչ չեմ անում, այլ միայն այն, ինչ Հայրն է Ինձ ցույց է տալիս: Ինչ որ Հայրն է ցույց տալիս, այն եմ անում»:

136 Եվ, Հա՛յր, նույնն էլ այսօր է: Եկեղեցին, ճշմարիտ հավատացյալները, հավատացյալների Մարմինը սնվում է այն կերակուրով, հոգևոր կերակուրով, որի մասին անվանական քրիստոնյաները ոչինչ չգիտեն: Աշխարհը ոչինչ չգիտի այս կերակուրի մասին, Հայր: Բայց Քո Եկեղեցին, Քո ժողովուրդը, Քո Որդու Հարսը սիրում է այն:

137 Մենք ունենք մեր մարմինների բժշկությունը, երբ բժիշկներն անզոր են: Մեզ հասանելի է սա: Դա Աստծո ուտելիքներից մեկն է, որ Նա տվել է Իր Եկեղեցուն, և խոստացել է այն նորից տալ Իր հավատացող զավակներին այս վերջին օրերում: Հա՛յր, օգնի՛ր մեզ լինել հավատացող զավակներ, որովհետև ամեն բան հնարավոր է հավատացողներին: Շնորհի՛ր դա, սիրելի՛ Աստված: Մենք այդ խնդրում ենք Հիսուսի Անունով: Ամե՛ն:

138 Կարծեմ Բիլլին ինձ ասաց, որ մի քանի թերթիկներ բաժանվել են: Եթե ինչ-որ մեկն ինձ ասի թերթիկի վրա գրված տառը, դա ինձ բավական կլինի: [Ինչ-որ մեկն ասում է. «Գ»: Ծան. խմբ.]: Աղոթքի թերթիկ Գ, լավ, վերցնենք Գ-1 թերթիկը, սկսենք, սկսելու համար մեր փոքրիկ շարքը: Տեսնում եք, հիմա դրանք կարող է լինեն ամենուր: Հիմա, եթե ինչ-որ մեկը...Տեսե՛ք, ես կփորձեմ սա: Չգիտեմ, կկարողանանք դա անել, թե ոչ; Կամ էլ կարող ենք պարզապես կանչովի շարք ունենալ. դուք հանգիստ նստեք: Ինձ համար դա կարևոր չէ: Կբարձրանաք այստեղ՝ հարթակի վրա, թե կանչովի շարք ենք ունենալու, ինձ համար դա կարևոր չէ, ցանկացած ձևով: Ես կախված եմ միայն Սուրբ Հոգուց: Ես կախված եմ Նրանից, որ պաշտպանի այս Խոսքը, որը ես քարոզել եմ:

139 Զո՛րջ Ռայթ եղբայր, ես հավատում եմ դրան: Դեռ փոքրիկ տղա էի, շատ տարիներ առաջ իջնում էի ձեր տուն, լսում էի ծառի վրա նստաց այն ծեր այծկիթին, ես դեռևս հավատում եմ այդ նույն Պատգամին: Ես հավատում եմ, դա նույնն է:

140 Լավ, տեսնում եմ, որ այստեղ տեղ են ազատում աղոթքի շարքի համար: Լավ, Գ- 1, 2, 3, 4, 5 թերթիկներ ունեցողները թող առաջինը մոտենան և կանգնեն այստեղ: Եթե չեք կարող վեր կենալ, եթե բարձրացնեք ձեր ձեռքերը, նրանց մեկը կբերի ձեզ: [Ինչ-որ մեկը խոսում է Բրանհամ եղբոր հետ: Ծան. խմբ.]: (Ի՞նչ է սա: Այո: Ըհը): Աղոթքի թերթիկ Գ-1, 2, 3, 4, 5: Իսկ հիմա թող ուշադրություն դարձրեն նրանք, ովքեր աղոթքի թերթիկ չունեն...

141 Հիմա, ես նմանատիպ աղոթքի շարք երկար ժամանակ չեմ ունեցել, երկար ժամանակ: Քանի՞սն են հիշում իմ հանձնարարությունը, երբ այստեղ կառուցում էինք խորանը: Ասվեց. «Կատարի՛ր ավետարանչի աշխատանքը»: Չասաց, ես ավետարանիչ եմ եղել: Ասաց. «Կատարի՛ր ավետարանչի աշխատանքը,— տեսնում եք,— որովհետև կգա ժամանակ, երբ այն կփոխվի»: Այդ ժամը հասնում է: Լավ: Հիմա, այս, Նա...

142 Դուք չեք կարող երկու կամ երեք տարբեր ծառայությունները խառնել իրար, լինել միաժամանակ և՛ հովիվ և՛ ավետարանիչ: Դուք չեք կարող միաժամանակ լինել մարգարե և ասենք՝ հովիվ, հասկանում

եք, որովհետև դրանք տարբեր աշխատանքներ և ծառայություններ են։

143 Բայց Տերը տվել է ինձ այն, ինչ ես պետք է անեմ իմ Պատգամում։ Բայց հետո Նա ասաց. «Կատարի՛ր ավետարանչի աշխատանքը, լիովին ապացուցիր ծառայությունդ, որովհետև կգա ժամանակ, երբ ողջամիտ վարդապետությանը չեն հանդուրժի»։ Եթե դեռ չի եկել հիմա։ Բոլոր հարանվանական եկեղեցիները մերժել են ինձ։ Նրանք ողջամիտ վարդապետությանը չեն հանդուրժում։ «Այլ իրենց ցանկությունների համաձայն վարդապետներ պիտի հավաքեն իրենց շուրջը, իրենց ուզածը լսելու մարմաջով։ Եվ նրանք մեծ բաներ կանեն Հանեսի ու Համրեսի նման, ովքեր հակառակվեցին Մովսեսին, բայց իրենց անմտությունը հայտնի պիտի դառնա»։ Տեսնո՞ւմ եք։ Տեսնո՞ւմ եք։ Լավ, նմանակումներ։ Տեսնում եք, ինչպես Համրեսն…

144 Երկնքում Աստված գիտի, որ 1933 թվականից այն գտնվում է անկյու…(հենց այս Խորհանի)…քարում, գրված Աստվածաշնչի էջի վրա, հենց այնտեղ դրված է։ Տեսե՛ք, թե ինչպես նրանք արեցին դա։ Տեսե՛ք, թե ինչ է կատարվում. նմանացումներ, հենց այդպես։ Ասաց. «Հանգիստ թող նրանց, որովհետև սրանց անմտությունը նույն ձևով հայտնի պիտի դառնա, ինչպես Հանեսինն ու Համրեսինը եղավ»։ Ահա մենք այդ օրում ենք գտնվում։

145 Ես տեսել եմ եկեղեցին, երբ դեռ անկյունաքարն էինք դնում, մարդիկ պատուհանագոգերից կախված էին և շուրջ բոլորը կանգնած էին խորանի պատերի շուրջ։ Ահա, խնդրեմ։ Երբ խորանը կառուցում էինք, այս քաղաքի մարդիկ ասում էին. «Վեց ամսվա ընթացքում…»։ Իսկ մենք մեկ դոլար և ութ ցենտ ունեինք խորանը կառուցելու համար, մեխանիկներից շատերը կարծում էին, որ դա իրենց ավտոտնակը կդառնա։ Բայց այն դեռևս ծառայում է որպես ոչխարների փարախ Աստծո գառնուկների համար։

146 Մեկ, երկու, երեք, հինգ, վեց, յոթ, ութ, ինը, տաս։ Աղոթքի թերթիկներ Գ– վեց, յոթ, ութ, ինը, տաս։ Լավ։

147 Հիմա. «Ես՝ Տերս եմ տնկել այն, գիշեր ու ցերեկ կոռոգեմ, որպեսզի ոչ մեկը չպոկի այն Իմ ձեռքից»։ Նայե՛ք քննադատություններին։ Ոչ մի հարանվանություն դրան չի սատարում։ Ոչ մի եկեղեցի նման չէ սրան ամբողջ երկրում։ Ո՛չ հիսունականները, ո՛չ մեկը երկրում նեցուկ չեն մեզ։ Բոլորը դեմ են ջրի մկրտությանը և մնացած

բաներին: Նույնիսկ իմ ընտանիքում իմ սեփական հայրն ինձ դուրս հանեց տնից, ես շորերս դրեցի փոքրիկ թղթե տոպրակի մեջ և գնացի ապրելու Նյու Օլբանիում: Ճիշտ է:

Բազմաթիվ վտանգների, տանջանքների
և ծուղակների միջով,
Ես արդեն եկել եմ.
Այս շնորհքն ինձ մինչ այժմ ապահով է
պահել,

Ես հիսուն վեց տարեկան եմ և շուտով անցնելու եմ գետից այն կողմ:

Եվ շնորհքն ինձ կտանի տուն:

Եվ երբ մենք այնտեղ էինք տասը հազար
տարի,
Արևի պես պայծառ,
Մենք ոչ պակաս օր կունենանք երգելու
Աստծո փաքը
Քան այն ժամանակ, երբ մենք նոր էինք
սկսել:

Ո՛հ, որքա՜ն եմ Հիսուսին սիրում: Նա ամբողջ աշխարհն է ինձ համար:

148 Ո՛հ, լավ, քանիսի՞ն եմ...Որի՞ վրա կանգ առա. տասի՞: Կարո՞ղ ենք ևս մի քանիսին կանչել: Ծատ լավ: Ո՞րն էր դա. տա՞սը, տասնհի՞նգը: Լավ: Գ–ն, տասից մինչև տասնհինգը որտեղ էլ որ լինեք, եթե կարող եք վեր կենալ և շարքի մեջ մտնել: Ի՞նչ է ասում: Հը՞: Լավ: Ուրեմն աղոթքի թերթիկ Գ՝ տասնհինգից մինչև քսան: Թող լինի Գ–ն, տասնհինգից մինչև քսան: Տաս հոգի ավել մարդ կլինի: Մենք տեսնում ենք...Տեսնո՞ւմ եք, տեսնո՞ւմ եք շարքը որտեղ է, մենք չենք ուզում, որ նրանք, նրանք կուտակվեն: Եվ մենք...Լավ:

149 Հիմա, ձեր ամբողջ ուշադրությունը դարձրեք ինձ, մենք երկար չենք լինի: Բայց հիմա, ոհ, ի՜նչ ժամ է, ի՜նչ ժամանակ: Ես, ես կուզեի, որ բոլորը կարողանային սիրել Տիրոջը: Ես, ես կուզեի, որ բոլորս կարողանայինք հասնել այս վայրը՝ իրացնելու այս բոպեի ներուժը: Եկե՛ք փորձենք դա: Ձեր ուշադրությունը դարձրեք ինձ:

150 Ինչ, ի՞նչ ենք մենք փորձում անել այստեղ: Աստծո Խոսքը դնում ենք փորձարկման: Եղիան նույն բանն արեց, բարձրացավ սարը, այն բանից հետո, երբ ինքը գիտեր, որ ուղարկված էր Աստծուց դա անելու համար:

Նա ասաց. «Եկե՛ք ապացուցենք, թե ով է Աստված, այն աստվածը, որը կրակով կպատասխանի, նա է Աստվածը»։

151 Հեթանոսներն իրենք իրենց կտրատում էին, ասում էին. «Դե իհարկե, չ...»։ Հեթանոսները գիտեին, որ կրակ չի իջնի, դրա համար գոռում գոչում էին։

152 Բայց Եղիան գիտեր, որ այն կիջնի, որովհետև Տիրոջից տեսիլք էր ստացել։

Դուք կասեք. «Տեսիլք էր ստացե՞լ»։

153 Այո՛, պարոն։ Երբ նա ամեն ինչ իր կարգով դրեց, ասաց. «Տե՛ր, ես այս ամենը Քո խոսքով եմ կատարել»։ Եվ այդ ժամանակ կրակը սկսեց իջնել։ Երբ Աստծո Խոսքը պահվում է մինչև վերջին տառը, այդ ժամանակ Աստծո գործն է հոգ տանել մնացածի մասին։ Նա միայն խնդրում է, որ դու այն դնես այնտեղ։ Եվ վստահ եղիր, որ դու կանչված ես դա անելու համար։ Հասկանո՞ւմ եք։ Եթե կանչված ես, ուրեմն մնացածի համար Նա հոգ կտանի։

154 Հիմա, այս շարքով կանցնեն մարդիկ, որոնց համար ես աղոթելու եմ...Հիմա, լավ, դուք համարյա պատին եք հասել, լավ, կսկսենք շարքը։ Հիմա, նախ և առաջ, բոլոր դեպքերում ինչ-որ տեղ՝ այստեղ, շենքում որոշ մարդիկ...

Այստեղ քանի՞սը կան, որ աղոթքի թերթիկ չունեն, բայց հիվանդ են։ Բարձրացրեք ձեր ձեռքը։ Տեսնում եք, գրեթե ամենուր։ Հիմա, դուք գիտեք, որ եթե մեր Տերը... Եվ ես հավատում եմ, որ կաներ, եթե Նա նույնն է երեկ, այսօր և հավիտյան։ Նա աղոթքի շարքեր էր անցկացնում։ Մարդիկ մեծ շարքերով էին գալիս Նրա մոտ, բազմաթիվ, և Նա հպվում և օրհնում էր նրանց։ Մի անգամ Նա կանգ առավ և ասաց. «Ո՞վ Ինձ դիպչեց»։ Նայեց Իր շուրջը, ասաց այդ կնոջը, թե ինչի համար դիպչեց Իրեն, նաև ասաց, որ նրա արյունահոսությունը դադարել է, և նրա հավատքը նրան բժշկել է։

155 Ի՞նչ կլիներ, եթե նա շրջվեր և ասեր. «Դե, չգիտեմ, Տեր, երկար ժամանակ ես տառապել եմ դրանով»։ Դա չէր կատարվի։ Ո՛չ, դա չէր կատարվի։ Ո՛չ։

156 Ի՞նչ կլիներ, եթե Նա ասեր փյունիկեցի կնոջը. «Այս խոսքիդ համար, աղջիկդ, դևը դուրս եկավ նրա միջից», ի՞նչ կլիներ եթե ասեր. «Դե, հիմա, Տեր, ես, ես ուզում էի, որ Դու *այս ձևով* դա անեիր»։ Դևի կմնար այդ աղջկա մեջ։ Բայց նա ակնկալում էր գտնել իր երեխային այպես, ինչպես Տերն ասաց։

157 Հիմա, Նա մեզ ասել է. «Եթե կարող ես հավատալ: Եթե այս լեռանն ասեք՝ տեղաշարժվի՛ր, և ձեր սրտում չտարակուսեք, բայց հավատաք, թե ինչ որ ասում եք պիտի լինի, այդպես էլ կլինի: Երբ աղոթում եք, հավատացեք, որ կստանաք, և դա կտրվի ձեզ»: Ինչպիսի՜ խոստում:

158 Այն մարդը, ով սոցիալական ավետարան է քարոզում ամենևին էլ դրան չի հավատում: Նա կմոտենա դռանը, կնայի ներս, կամ էլ կկանգնի այնտեղ և կասի. «Սուրբ թռչկոտողների ևս մի խումբ», և կգնա: Հասկանո՞ւմ եք: Բայց ինքը չգիտի, որ սա թաքնված կերակուր է: Նա չգիտի, որ սա գաղտնի Բան է, որը պահված է նրանից: Նա դա չգիտի: Սա, սա, սա ցավալի է, միտքը, որը մերկ, թշվառ, կույր է և չգիտի այդ մասին: Հասկանո՞ւմ եք: Դա ահավոր բան է:

159 Ո՛վ Աստված, թող նախ մեռնեմ, բայց թույլ մի՛ տուր, որ հասնեմ այդ մակարդակին: Ավելի լավ է մեռնեմ (այո, պարոն), քան անեմ դա: Կարծում եմ բոլորս էլ այդպես կանեինք, այնպես չէ՞:

160 Բայց, հիմա, Աստված մեր խոստացել է այս բաները վերջին օրերում: Մաղաքիաի 4-րդ գլխում ասվում է, որ Հիսուս Քրիստոսը կիջնի և Իրեն կմարմնավորի մարդկային մարմնի մեջ, ինչպես որ արեց Սոդոմի ժամանակ: Դա ճիշտ է: Ասվում է նաև, որ աշխարհը գտնվելու է սոդոմական վիճակում: Նաև ասվում է. «Ինչպես այդ ժամանակ էր, նույն կերպ էլ այն օրը կլինի, երբ Մարդու Որդին հայտնվի»: Տեսե՛ք, այն Մարդը, որ իջավ մարդու տեսքով Աբրահամի մոտ, խոստացված որդու գալուստից առաջ, «Էլոհիմն» էր: Տեսե՛ք, թե ով էր Նա, Աբրահամն ասաց, որ դա Աստված էր: Աստվածաշունչն ասում է, որ երեք տղամարդիկ եկան նրա մոտ, փոշոտված հագուստներով, ճամփորդներ, նստեցին և կերան մարդկանց պես: Հիսուսն ասաց. «Հենց այդ ժամանակ, երբ աշխարհը ընկնելու է սոդոմական վիճակում, այդ ժամանակ Մարդու Որդին նորից Իրեն կհայտնի»: Ոչ թե Աստծո Որդին, այլ Մարդու Որդին, տեսնում եք, կհայտնի Իրեն:

161 Հիմա նշագծեք դա այն բանի հետ, ինչ որ վերջին մարգարեն ասաց. «Ահա, Ես ձեզ մոտ Եղիա մարգարեին պիտի ուղարկեմ, և նա երեխաների սիրտը՝ հայրերին պիտի դարձնի»: Տեսնո՞ւմ եք: Պատգամը, նրանց Սուրբ Գրքին վերադարձնելու համար է, և այդ օրը

Մարդու Որդին կհայտնի Իրեն: Եվ այն օրը՝ վերջին եկեղեցու ժամանակաշրջանի յոթերորդ հրեշտակի հնչեցման օրը, Աստծո խորհուրդները հայտնի պիտի դառնան: Յոթ կնիքները բացվելու են: Բոլոր եկեղեցիների խորհուրդները և այլն, թե ինչպես են դրանք տեղի ունեցել, և ինչ է կատա...ինչպես, ինչ է կատարվել:

162 Տեսնում եք, նրանք չգիտեն այդ: Հիսուսն ասաց. «Դուք կույր փարիսեցիներ եք»: Ասաց. «Եթե կույրն առաջնորդի կույրին, մի՞թե երկուսն էլ փոսը չեն ընկնի»: Տեսնում եք, այդ է պատճառը, որ մարդիկ չեն տեսնում դա:

163 Դրա խորհուրդը, այդ Կնիքների, այն է՝ որ եկեղեցիներից ամեն մեկը կազմակերպություն շինեց և մտավ դրա մեջ, և դա գաղտնի բաներից մեկն էր, որ հաճելի չէր Աստծուն: Հասկանո՞ւմ ես դա, դոկտոր Լի: Տեսե՛ք: Դա այդպես է: Դա հենց այնտեղ է, դա գաղտնիքներից մեկն է: Նրանք կազմակերպվեցին և, տեսեք, ամբողջությամբ դուրս եկան Աստծո կամքից: Եվ վերջին օրերում դա բացահայտվելու է, և մարդկանց պետք է առաջնորդել ոչ թե հավատամք կամ հարանվանության, այլ ետ՝ դեպի ճշմարիտ Խոսքը: Իսկ ճշմարիտ Խոսքը հայտնվելու է որոշակի խմբի մարդկանց, և Մարդու Որդին կհայտնի Իրեն նրանց մեջ. «նույնը երեկ, այսօր և հավիյան»:

164 Ո՛հ, Աստված իմ: Ո՛հ, ես սիրում եմ դա: Ես սիրում եմ, սիրում եմ պարծենալ Նրանով: Ես սիրում եմ մեծացնել Նրան մարդկանց առջև: Կարիք չկա, որ ես Նրան մեծացնեմ, Նա արդեն մեծ է: Նա այնքա՜ն բարձր է, որ չես կարող հասնել Նրան, այնքա՜ն խորն է, որ չես կարող Նրա տակ անցնել, այնքա՜ն լայն է, որ չես կարող շրջանցել Նրան, մինչդեռ քո սրտում տեղ ունես Նրա համար: Չեք ուզո՞ւմ ընդունել Նրան: Ինչքա՜ն հրաշալի է մեր Տերը: Լավ:

165 Հիմա եկե՛ք բոլորս հանդարտվենք: Հիմա, մենք խոսեցինք սրա մասին: Հիմա բանը նրանում է, թե արդյոք սա ճշմարտությո՞ւն է: Հիմա, այստեղ կարող են օտարներ լինել: Ես կարող էի ասել, եթե...ձեզ, եթե Քրիստոսը նույնն է երեկ, այսօր և հավիտյան, ի՞նչ կաներ այս րոպեին: Արդյոք Նա նույն բանը կանե՞ր, ինչ արեց, երբ նախկինում այստեղ էր: Ճի՞շտ է: Հավատքով մարդիկ դիպչում էին Նրա հանդերձին և Նա շրջվում էր: Ինչպես որ արեց

ջրհորի մոտ կանգնաց կնոջ դեպքում, և մյուս վայրերում, և տեսնում էր նրանց մտքերը։

Հիմա, դուք կասեք. «Նա կկարողանա՞ր ինձ բժշկել»։

166 Նրա Խոսքն է ասում, որ Նա արդեն այդ արել է։ Բայց խնդիրն այն է, որ ինքն Իրեն հայնի դարձնի, ու Նա ասյտեղ է։

167 Հիմա, եթե Նա մեզ հայտնվեր ֆիզիկական մարմնում, ճիշտ այնպես, ինչպես Հոֆմանի նկարում՝ *«Քրիստոսի դեմքը երեսուներեք տարեկանում»,* և արյունը հոսեր Նրա ձեռքից և այլն, մեխերի սպիները վրան, ես դա չէի ընդունի։ Ոչ, ո՛չ։ Ոչ, ո՛չ։ Երբ Նա գա՝ «Ամեն աչք տեսնելու է Նրան, ամեն լեզու դավանելու է Նրան. և ինչպես կայծակն է դուրս գալիս արևելքից և երևում մինչև արևմուտք, այդպես կլինի Նրա գալուստը»։ Հասկանո՞ւմ եք։ Մենք այս կուլտերին և կլաններին չենք հավատում։ Մենք հավատում ենք, որ Աստված է Խոսքը։

168 Բայց Նա մարմնավորվում է, վերցնում է իմ ու քո մարմինը, և ինձ ու քեզ պարգևներ է տալիս, և այդ պարգևների միջոցով Իրեն հայտնի է անում։ Դա գաղտնի կերակուր է։ Կարևոր չէ, թե Նա ինչքան է Իրեն հայտնելու իմ միջոցով, դուք պետք է դրան հավատաք, պետք է նաև հավատքի պարգև ունենաք դրան հավատալու համար։ Հավատո՞ւմ եք դրան։ [«Եկեղեցին ասում է. «Ամեն»։ Ծան. խմբ.]։ Իսկ հիմա եթե Նա այդ կերպով հայտնի Իրեն, կհավատա՞ք Նրան։ [«Ամեն»]։ Ձեր ո՞ղջ սրտով կհավատաք։ Ո՛հ, ինչքա՜ն սքանչելի է, պարզապես սպասել Նրան, պարզապես սպասել և տեսնել, թե ինչ կասի Նա։

169 Ահա այստեղ մի տղամարդ է կանգնած։ Որքան գիտեմ՝ ես նրան կյանքում երբեք չեմ տեսել։ Լավ, ուժեղ և առողջ տղամարդու տեսք ունի, և հավանաբար այդպես էլ կա, ես, ես, ես չգիտեմ։ Բայց նա կանգնած է այնտեղ։ Հիմա, ես կարող էի գնալ ձեռքերս դնել նրա վրա և աղոթել իր համար, հարցնելով, թե արդոյք նա կհավատա։ Նա կարող էր այնտեղ կանգնել և ասել ինձ, ասել. «Ես, ես, ես ուզում եմ, որ աղոթեք *այսինչ և այնինչ* բանի համար։ Ինձ մոտ, ինձ մոտ ակրոմեգալիա է։ Ունեմ մշտական գլխացավեր։ Ստամոքսի խոց ունեմ», կամ դրա նման մի բան։ Նա, նա, ես չգիտեմ։ Այս բաներից ցանկացածը նա կարող էր ասել։

170 Ես կասեի. «Լավ, սըր, եղբայր։ Ես ձեռքերս կդնեմ և կաղոթեմ ձեզ համար»։ Դա միանշանակ ճիշտ

կլիներ։ Հենց դա ենք մենք արել ամբողջ դարաշրջանի ընթացքում։ Ճի՞շտ է։

171 Բայց հիշե՛ք, Հիսուսն ասաց, որ Նրա Գալստյան ժամանակ այլ կերպ է լինելու, ինչպես Սոդոմի օրերում էր։ Այն Մարդը, որ եկավ, մեջքով շրջված էր դեպի վրանը, որտեղ Սարան էր, և Նա ասաց. (հիմա ոչ թե «Աբրամ»), այլ «Աբրահամ»։

172 Տեսեք, նախորդ օրը նա Աբրամ էր։ Բայց նա տեսիլք ունեցավ և Տերը նրան ասաց, որ. «Ես կփոխեմ քո անունը»։

173 Եվ ահա Տերն Ինքը մարդու տեսքով ուտում և խմում է Նրա հետ։ Հարցրեց. «Աբրահա՛մ, որտե՞ղ է քո կինը՝ Սառան»։ Ս–ա–ռ–ա–ն, ոչ թե Ս–ա–ր–ա–ն։

Աբրահամը պատասխանեց. «Նա վրանում է, Քո հետևում»։

174 Ասաց. «Ես քեզ կայցելեմ քսանհինգ տարի առաջ քեզ տված Իմ խոստումի համաձայն»։

175 Սառան ինքն իրեն ծիծաղեց։ Նա ասաց. «Սառան ծիծաղեց վրանում, ասելով. «Ինչպե՞ս կարող է դա կատարվել»։ Ըհը։ «Աստծու համար արդյոք դժվար բան կա՞»։ Տեսնո՞ւմ եք։ Ոչ մի բան։ Ո՛չ, պարոն։

176 Հիմա, Նա ասաց, Հիսուսը խոստացել է, որ. «Նա՝ Մարդու Որդին, ով Խոսքն է, (հավատո՞ւմ եք դրան), «կգա վերջին օրերում և կհայտնի Իրեն այն ժամանակ, երբ աշխարհը Սոդոմի և Գոմորի նման կլինի»։ Հավատո՞ւմ եք, որ դա ճշմարտություն է։

177 Նախքան առաջին աղոթքն անելը, այնտեղ ձեզանից ոմանք թող աղոթեն և կտեսնեք, թե արդյոք Մարդու Որդին դեռևս նույնն է երեկ, այսօր և հավիտյան։ Պարզապես հարցրեք, թե արդյոք դա այդպես է, ասեք. «Տե՛ր, այս մարդը չի ճանաչում ինձ, բայց ես գիտեմ, որ Դու նույնն ես երեկ, այսօր և հավիտյան», տեսեք, թե արդյոք Նա կասի դա ձեզ։

Այո, պարոն։ Հիմա մի պահ բարձրացրեք ձեր գլուխը։

178 Նա իմ հետևում է։ Երեխա է։ Հենց հիմա ջերմությունից այրվում է։ Փոքրիկ աղջիկ է։ Դուք այս քաղաքից չեք։ Երեխան ստամոքսի խնդիր ունի։ Ուներ։ Պարզապես հավատացե՛ք։

179 Հիմա, արդյո՞ք սա այն է, ինչ Նա ասել է, որ կանի: Ես այդ մարդուն կյանքում երբեք չեմ տեսել: Երկնքում Աստված գիտի դա:

180 Այս տղամարդն այստեղ, նա շատ ուժեղ և առողջ տեսք ունի: Բայց տեսնո՞ւմ եք այդ ստվերը նրա վրա այնտեղ: Դա նշանակում է, որ եթե Աստված չօգնի նրան, նա երկար չի ապրի: Նա քաղցկեղ ունի: Այն ձեր թոքերում է:

Հիմա, Մարդու Որդին այստեղ է:

Նա իր սրտում բեռ ունի փոքրիկ տղաի, փոքրիկ երեխայի համար: Ճի՞շտ է: Հավատո՞ւմ եք, որ Աստված կարող է ինձ ասել, թե ինչ խնդիր ունի այդ երեխան: [Եղբայրն ասում է. «Գիտեմ, որ կարող է»: Ծան. խմբ.]: Նա կարող է: Նրա մոտ հիշողության կորուստ է լինում էպիլեպսիայի նման: Հենց վերջերս նրա մոտ դա կրկնվել է: [«Այսօր առավոտյան»]: Ճիշտ է, այսօր առավոտյան: Հավատո՞ւմ եք, որ դուք ապրելու եք, որպեսզի մեծացնեք այդ տղային, և նրա հետ ամեն բան լավ կլինի:

181 Որտե՞ղ է Չարլի Կոկսը: Որտե՞ղ է նա: Չարլի՛, որտե՞ղ ես: Ես կարծում էի, որ այսօր երեկոյան նա այստեղ է: Այս կողմերում էր, Չարլի: Գարի՛, որտե՞ղ ես: Լարրի՛, նա այստե՞ղ է: Նրա փոքրիկ տղայի մոտ էլ նույն բանն էր, նույն խնդիրը: Որտե՞ղ ես, Լարրի: Մի րոպե արի այստեղ: Ահա նա: Այս փոքրիկ տղայի մոտ էլ նույն խնդիրն էր: Նրա հայրիկն ու մայրիկը իմ շատ լավ ընկերներն են: Տարիներ առաջ ես այնտեղ եմ եղել, այս փոքրիկ տղայի մոտ ուշաթափություն և գիտակցության կորուստ էր լինում: Դա էպիլեպսիա էր: Ես միանգամից դա հասկացա, և խնդրեցի Աստծուն, որ բժշկի նրան: Այդ ժամանակվանից նրա մոտ երբեք չի կրկնվել: Սա նրա հայրիկն է, նրա մայրիկը նստած է այնտեղ՝ ինչ-որ տեղում, և ահա ինքը փոքրիկը:

182 Հիմա հավատո՞ւմ եք, սը՛ր: (Ծնորհակալություն, Լարրի): Հավատո՞ւմ եք, պարո՛ն: Թող երկնքի Աստվածը նույն բանը ձեզ շնորհի, և ապրեք երեխային մեծացնելու համար: Աստված օրհնի ձեզ:

Աղոթենք:

183 Սիրելի՛ Աստված, օգնի՛ր նրան: Խնդրում եմ, որ Քո շնորհքն ու ողորմությունը հանգչի նրա վրա և օրհնի իրեն: Հիսուսի Անունով:

184 Հիմա վերադարձեք Լուիզիանա, ուրախ եղեք և փառք տվեք Աստծուն նրա համար:

185 Ո՛հ, այո՛, նա Լուիզիանայից էր, այո, Չարլիզ լիճի մոտերքից: Ճիշտ է: Տեսնում եք, ես հիմա կարողանում եմ որսալ ձեր մտքերը: Փա՜ռք Աստծուն:

186 Դուք լավ բան եք խնդրում, ուզում եք երեխա ունենալ: Արդեն երկու երեխա ունեք, բայց ևս մեկին էլ եք ուզում: Թող երկնքի Աստվածը շնորհի դա ձեզ, քույրս: Եկե՛ք այստեղ, ես պարզապես ուզում եմ ձեռնադրել ձեզ:

187 Սիրելի՛ Աստված, տուր այս կնոջն իր սրտի փափագը, քանի որ դա արժանի պատճառ է: Հիսուսի Անունով: Ամեն:

Հիմա գնացեք և ունեցեք այն երեխային:

188 Աստված բարի Աստված է: Հավատո՞ւմ եք դրան: Նա գիտի մեր բոլոր կարիքները: Նա հոգում է մեր բոլոր կարիքները, եթե հավատում ենք դրան: Նա ասաց. «Եթե կարող ես հավատալ»:

189 Ես ինչ-որ տեղ սեղմել եմ ձեր ձեռքը: Չեմ հիշում, թե որտեղ էր, բայց ինչ-որ տեղ սեղմել եմ այն: Հստակ չեմ հիշում, բայց մենք այսօր ինչ-որ տեղում էինք գտնվում, բայց չգիտեմ, թե որտեղ էր: Սակայն մենք այստեղ չենք խոսում այն մասին, թե դա որտեղ էր: Դուք այստեղ եք, որ ասեք, ավելի ճիշտ, աղոթեք, ուզում եք, որ աղոթեմ ուրիշի համար: Դա ճիշտ է: Նա այստեղ չէ: Ջորջիայում է, հիվանդ է: Նա ոչ միայն ֆիզիկապես է հիվանդ, այլ նաև հոգեպես. ձեր զարմիկն է: Հավատո՞ւմ եք, որ Աստված կհոգա դրա մասին, քանի որ դուք կանգնեցիք նրա համար: Հավատո՞ւմ եք: Եկեք այստեղ, որ միասին աղոթենք:

190 Սիրելի՛ Աստված, շնորհիր այս մարդուն իր սրտի փափագը, որ կարողանա գնալ և գտնել այդ մարդուն Աստծուն կանչելիս: Ես դա խնդրում եմ Հիսուսի Անունով: Ամեն:

Աստված օրհնի ձեզ: Մի՛ կասկածեք: Հավատացե՛ք ձեր ողջ սրտով:

191 Բարև ձեզ: Այնպես չէ, որ ես ձեռքս չպարզեցի, որ սեղմեմ ձեր ձեռքը, երբ ձեր ձեռքը մեկնեցիք, բայց ես ինչ-որ բան նկատեցի: Դա ստվեր էր, մութ և սև ստվեր: Դա է պատճառը: Գիտեմ, ես բռնեցի ձեր ձեռքը, այդպես ես դա հայտնաբերեցի: Բայց դա քաղցկեղ էր: Հավատում եք, որ Աստված կարող է այն հեռացնել: Դա կրծքավանդակում է, ձախ կողմում: Դուք ուզում եք վերադառնալ Կարոլինա և փառաբանել Տիրոջը ձեզ

բժշկելու համար, այդպես չէ՞: Հասկանո՞ւմ եք, թե ինչ եմ ուզում ասել: Աղոթենք:

192 Սիրելի՛ Աստված, Հիսուս Քրիստոսի Անունով, Մեկի, Ով հիմա ներկա է. երեխաները ուտում են Աստծո Հացը, թող այս երեխան էլ ուրախանա հավատքով, Աստծո Հացը, որ հիմա Նա տալիս է նրան իր բժշկության համար: Թող նա գնա և առողջ լինի Հիսուսի Անունով: Ամեն:

Աստված օրհնի քեզ, եղբայր; Հավատացե՛ք ձեր ողջ սրտով:

Բարև ձեզ:

193 Մի՞թե սա սքանչելի ժամանակ չէ: Կարծես թե ակնածանք է իջել մարդկանց վրա: Կամ գուցե իմ ականջներին է թվում, որ ինչ-որ բան է անցնում. «Շ-շ-շ-շ»: Պարզապես ձայն է հանում. «Շ-շ-շ-շ», այդպես, հասկանո՞ւմ եք: Սա երեխաների Հացն է: Հասկանո՞ւմ եք: Սա ձերն է: Ձեր համար է: Սա ոչ թե ինձ, այլ ձեր համար է: Ես շատ շնորհակալ եմ, հիմա այդ ժամանակում, ես... Որքան գիտեմ, ես լավ եմ, բայց սա Հաց է նաև ինձ համար, եբր դրա կարիքն ունեմ: Սա Հաց է ձեզ համար: Սա քաջալերում է: Նույնիսկ նրանց համար, ովքեր հիվանդ չեն, դա պարզապես մոտեցնում է մեր սրտերը Աստծուն:

194 Սա ճիշտ ժամանակին է, այն ինչ Նա ասեց, որ անելու է: «Եվ ինչպես Սոդոմի օրերում էր, այնպես էլ կլինի Մարդու Որդու գալստյան ժամանակ, երբ Մարդու Որդին հայտնվի»: Հասկանո՞ւմ եք: «Եվ ահա Եղիա մարգարեին պիտի ուղարկեմ ձեզ մոտ, նախքան Տիրոջ մեծ ու ահեղ օրվա գալը: Նա մարդկանց սիրտերը հայրերին պիտի դարձնի»: Հասկանո՞ւմ եք: Ըմբռնո՞ւմ եք:

195 «Եվ այդ ժամանակ արդարները քայլելու են անբարիշտների մոխիրների վրայով»: Նրանք վարարանի պես կվառվեն, տեսնում եք, աշխարհը: Մենք տեսնում ենք, որ դա հեռու չէ: Հրաբուխը տարածվելու է ամբողջ աշխարհով մեկ, և երկինքը կրակի մեջ է լինելու:

Օ՜ դարերի Ապավեն, ողորմի՛ր ինձ հիմա և այսուհետ:

196 Բարև ձեզ: Նախ, դուք կանացի խնդիր ունեք, կանացի հիվանդություն: Ուրիշ բաներ էլ կան. նյարդային եք, հենց տարիքի հետ կապված, նյարդային: Ունեք բոլոր տեսակի բարդություններ: Բայց դուք նաև մի ցանկություն ունեք, այն է՝ ստանալ Սուրբ Հոգին: Դա ճիշտ է: Ահա թե ինչ է դա: Հավատո՞ւմ եք, որ դուք...Ամեն ինչ խոստովանե՞լ եք: Հավատո՞ւմ եք, որ եթե ես դնեմ ձեռքերս ձեր վրա

և Աստծուց խնդրեմ անել դա, Սուրբ Հոգին կիջնի: [Քույրիկն ասում է. «Այո»: Ծան. խմբ.]: Հավատո՞ւմ եք դրան: [«Այո, պարոն»]: Աղոթենք:

197 Սիրելի՛ Աստված, ես ձեռքերը դնում եմ այս կնոջ վրա առաքելական ձևով, և խնդրում եմ, որ նա ստանա Սուրբ Հոգու մկրտությունը: Հիսուս Քրիստոսի Անունով թող նա ստանա Այն: Ամեն:

198 Մի՛ կասկածեք դրանում: Այն ձեզ է պատկանում, հասկանում եք: Այն ձերն է: Սա երեխաների Հացն է:

199 Անսովոր զգացողություն ունեցաք, երբ ասացի՝ «կանացի հիվանդություն», այդպես չէ՞: Որովհետև դա էլ կար ձեր մոտ: Հիմա, հավատո՞ւմ եք, որ հիմա բժշկվելու եք: Գնացեք, պարզապես շնորհակալություն հայտնելով Տիրոջը:

200 Բարև ձեզ: Հավատո՞ւմ եք ձեր ողջ սրտով: Հավատո՞ւմ եք, որ առաջվա պես կարողանալու եք ուտել: Լավ: Գնացեք և ասե՛ք. «Շնորհակալությո՛ւն, Տեր: Ես հավատում եմ դրան»: Տիրոջ Ներկայությունը:

201 Հավատո՞ւմ եք, որ մեջքի հիվանդությունը կհեռանա ձեզանից և դուք բժշկվելու եք: Լավ: Պարզապես գնացեք և ասե՛ք. «Շնորհակալությո՛ւն, սիրելի Աստված», և Աստված կշնորհի դա:

202 Հավատո՞ւմ եք, որ առողջանալու եք, որ Տերը կբժշկի ձեզ, և դուք արտրիտ չեք ունենա, ողջ և առողջ կլինեք: Հավատո՞ւմ եք դրան: Գնացեք, գոհություն հայտնելով Նրան և ասե՛ք. «Տե՛ր, ես այն ընդունում եմ իմ ամբողջ սրտով, և հավատում եմ դրան»:

Դուք, որ գտնվում եք այս դահլիճում, հավատո՞ւմ եք:

203 Դուք, որ այնտեղ եք, դրեք ձեր ձեռքը ձեր կողքին նստած կնոջ վրա և ասեք, որ երակների վարիկոզ լայնացումը և արտրիտը կթողնեն նրան: Երբ նա...?...

204 Աստված օրհնի ձեզ: Հավատո՞ւմ եք, որ բժշկվելու եք հիմա: Ուրեմն վերադարձեք տուն և եղեք բժշկված: Աստված օրհնի ձեզ: Շարունակեք ձեր ճանապարհը և ասե՛ք. «Շնորհակալությո՛ւն, Տեր Հիսուս»:

205 Բարև ձեզ: Հավատո՞ւմ եք, որ կանացի հիվանդությունը նույնպես կհեռանա ձեզանից և դուք բժշկվելու եք: Գնացեք և ասե՛ք. «Շնորհակալությո՛ւն, Տեր»:

206 Բարև ձեզ։ [Քույրիկն ասում է. «Միջողային ճողվածք»։ Ծան. խմբ.]։ Ո՛հ, Աստված իմ։ [«Տոտը՛ն»]։ Ես գիտեմ ձեր անունը։ Ես, ես…[«Տոտը՛ն»], երբ մկրտական եկեղեցու հովիվ էի։ [«Տոտը՛ն»]։ Տոտը՛ն։ [«Դելլա Տոտը՛ն»]։ Քույր Դելլա Տոտը՛ն։ Դուք հիմա տառապում եք մեչքի ցավերից։ [«Այո»]։ Հիմա ամեն բան լավ կլինի։ Հավատո՞ւմ եք, որ Նա բժշկելու է ձեզ։ Հիշո՞ւմ եք, տարիներ առաջ, թե ինչ կատարվեց Միլթաունի մկրտական եկեղեցում։ [«Այո, հիշում եմ»]։ Նա այսօր դեռևս նույն Աստվածն է։ Աստված օրհնի ձեզ, քույրս։

Ջորջ Ռայթ, ո՞ւր ես։ Դու հիշո՞ւմ ես։ Ո՛հ, ինչպես…

Հավատո՞ւմ եք, որ եթե այս օծությամբ ես ընդամենը դնեմ իմ ձեռքերը ձեր վրա, հավատո՞ւմ եք, որ կբժշկվեք։ Եկե՛ք այստեղ։ Հիսուս Քրիստոսի Անունով թող նա բժշկվի։ Ամեն։ Հավատք ունեցե՛ք։

Բոլորդ հավատո՞ւմ եք ձեր ողջ սրտով։

207 Հիմա, ի՜նչ լավ հին հիշողություններ արթնացավ, երբ տեսա այդ կնոջը։ Դեռևս չեմ կարողանում հիշել նրա անունը, բայց ես…[Ինչ-որ մեկն ասում է. «Տոտը՛ն»։ Ծան. խմբ]։ Տոտը՛ն։ Տոտը՛ն, ճիշտ է։ Ա՜հ, այո, նրա դստեր անունը Բերտի էր։ Ճիշտ է։ Դա լիովին ճիշտ է։ Չկարծեք, թե խելքս կորցրել եմ, ես ուղղակի մի քիչ, գիտեք, մի քիչ… չեմ կարող դա բացատրել։

208 Բայց ձեր մեջքի ցավը վերացավ, տիկին։ Գնացե՛ք, փառք տվե՛ք Տիրոջը և ասե՛ք. «Ծնորհակալությո՛ւն, Տեր»։

209 Դուք նույնպես հավատո՞ւմ եք, որ ձեր սրտի հետ կապված խնդիրը կլուծվի։ Պարզապես գնացեք, ուրախանալով և ասե՛ք. «Ծնորհակալությո՛ւն, Տեր Հիսուս», և հավատացեք դրան։ Լավ։ Հավատք ունեցեք հիմա։ Մի՛ կասկածեք։

210 Եկեք, տիկին։ Հավատո՞ւմ եք ձեր ողջ սրտով։ Դուք շատ խնդիրներ ունեք։ Դուք նաև մեջքի ցավեր ունեք։ Հավատո՞ւմ եք, որ Աստված ձեզ բժշկելու է։ Լավ, պարզապես գնացեք, ուրախանալով։ Այդ, այդ Նա է անում դա, որ ձեզ այդպես զգաք։ Գոհություն հայտնեք Տիրոջը։ Թող Աստված օրհնի ձեզ, քույր։

211 Ողջույն, որդյա՛կ։ Հավատո՞ւմ եք, որ Աստված բժշկելու է այդ երեխայի նյարդայնությունը և նրան առողջ է դարձնելու։ Հավատո՞ւմ եք դրան։ Լավ։ Ողջույն, բարեկամս, թույլ տուր սեղեմ քո ձեռքը։

212 Սիրելի՛ Աստված, վերցրու այդ չարիքը այս փոքրիկ երեխայից, և թող նա ապրի և նորմալ լինի: Հիսուսի Անունով: Ամեն:

213 Աստված օրհնի ձեզ, եղբայր: Հավատում եք դրան, այդպես չէ՞: Ձեզ հետ ամեն բան կարգին կլինի: Բնավ մի՛ կասկածեք:

214 Չափազանց երիտասարդ է սրտի հիվանդություն ունենալու համար: Հավատո՞ւմ եք, որ Աստված կբժշկի ձեզ: Գնացեք և ասե՛ք. «Շնորհակալությո՛ւն, Տեր, ինձ բժշկելու համար»:

215 Հավատո՞ւմ եք, որ Աստված կարող է բժշկել ստամոքսի հիվանդությունները և ձեզ առողջացնել: Գնացեք, ուրախանալով և ասե՛ք. «Շնորհակալությո՛ւն, Տեր»:

216 Նա դեռևս Աստված է, այդպես չէ՞: Միակ բանը, որ պետք է անեք, պարզապես հավատալն է: Ճիշտ չէ՞: Հավատո՞ւմ եք Մարդու Որդու հայտնվելուն այս վերջին օրերում:

217 Մի քանի րոպե առաջ այստեղ ինչ-որ բան կատարվեց, և ես չեմ կարողանում...փորձելով գտնել, թե որտեղ էր դա: Ինչ-որ մեկը հավատք ուներ և ինչ-որ բան արեց: Կամ գուցե հաջորդ կիրակի կգտնեմ նրանց կամ էլ երբ կկարողանամ: Դուք, դո՞ւք...Ահա նորից դա կատարվեց: Դուք բարձրացրել եք ձեր ձեռքը: Հավատո՞ւմ եք, որ Աստված կարող է բժշկել սրտի հիվանդությունները, ձեզ առողջացնել և բժշկել ձեր դստերը, ով տառապում է... Հավատո՞ւմ եք դրան: Տիկի՛ն Նեֆ, հավատո՞ւմ եք, որ Աստված...Լեո Նեֆ: Ես ձեզ չեմ ճանաչում, բայց ահա, թե ով եք դուք: Դուք սրտի խնդիր ունեք, իսկ ձեր փոքրիկ աղջիկը՝ երիկամների: Հավատո՞ւմ եք, որ նա բժշկվելու է: Ձեր հավատը ձեզ բժշկում է: Հավատացե՛ք ձեր ողջ սրտով:

218 Դուք կրկին այնտեղ՝ լողավազանում, որ կանգնած եք ստամոքսի խնդիրով, Հիսուս Քրիստոսը բժշկում է ձեզ:

219 Հավատո՞ւմ եք: Նա նույնն է երեկ, այսօր և հավիտյան: Հիմա եկե՛ք դնենք մեր ձեռքերը միմյանց վրա: Ո՛հ, մտածե՛ք այս ժամի և ժամանակի մասին, որում գտնվում ենք: Մտածե՛ք, որ մենք Հիսուս Քրիստոսի՝ Աստծո Որդու Ներկայության մեջ ենք: Նա խոստացել է, որ այս բաներն անելու է վերջին օրերում: Ես իմ ձեռքերը դնում եմ այս թաշկինակների վրա:

220 Սիրելի՛ Աստված, խնդրու եմ, որ օրհնես այս թաշկինակները մարդկանց մարմինների բժշկության համար, Հիսուս Քրիստոսի Անունով:

221 Հիմա, միմյանց վրա դրված ձեռքերով, ձեզանից ամեն մեկը Քրիստոսի Մարմնի անդամն է: Նույն Սուրբ Հոգին, որ խոստացել է հայտնել սրտի գաղտնիքները և անել այս բաները, ձեր մեջ է: Դուք Նրա մասնիկն եք, Ինքն էլ՝ ձերը: Հիմա, Նա ասել է հետևյալը. «Նրանց էլ, ովքեր կհավատան, այս նշանները կհետևեն»: Այսինքն՝ ձեզ: «Եթե հիվանդների վրա ձեռք դնեն, նրանք կառողջանան»: Հիմա, մի աղոթեք ձեզ համար, այլ նրա համար, ում վրա որ դրել եք ձեր ձեռքերը, որովհետև նրանք էլ ձեզ համար են աղոթում: Հիմա եկե՛ք միասին աղոթենք, և թող այս շենքում գեթ մի տկար էլ չմնա: Ինչո՞ւ էլի սպասենք իմ սիրելի եղբայր և քույր, ահա Նա՝ Սուրբ Հոգին, Աստված, այստեղ է, Նա, Ում մասին, որ խոսում էինք:

222 Սիրելի՛ Հիսուս, մենք ճանաչում ենք Քո Ներկայությունը: Վերջերս Դու այդ փոքրիկ երեխային մահացած լինելուց հետո հավատքի աղոթքի միջոցով կյանքի վերադարձրիր: Սիրելի՛ Աստված, այստեղ շատերն են, որոնց մենք չկարողացանք հասնել, ժամանակն անցնում է, բայց նրանք իրենց ձեռքերը դրել են միմյանց վրա: Նրանք հավատացյալներ են: Մենք նստած ենք մեռելներից հարություն առած Տեր Հիսուս Քրիստոսի Ներկայության մեջ, Ով նույնն է երեկ, այսօր և հավիտյան:

223 Սատանա՛, դու պարտված ես: Հիսուս Քրիստոսը հաղթել է քեզ: Նա մեռելներից հարություն է առել և այս երեկո կանգնած է մեր մեջ, հաստատելով վերջին օրերի այս Պատգամը: Դուրս արի՛ այս մարդկանց միջից: Հեռացի՛ր նրանցից Հիսուս Քրիստոսի Անունով: «Իմ Անունով դևեր կհանեն», և դուք հանում եք: Հիսուս Քրիստոսի Անունով հեռացե՛ք այս եկեղեցուց:

224 Այժմ բոլոր նրանք, ովքեր ընդունում են իրենց բժշկությունը, թող վեր կենան: Բոլորը, ովքեր ընդունում են բժշկությունը, թող վեր կենան: Հիմա բարձրացրեք ձեր ձեռքերը և փառք տվեք Նրան:

«Ես ընդունում եմ իմ բժշկությունը հիմա», ասե՛ք դա Աստծուն: «Ես ընդունում եմ իմ բժշկությունը հիմա: Դու նույն Քրիստոսն ես երեկ, այսօր և հավիտյան: Ես հիմա հավատում եմ Քեզ, օգնի՛ր իմ անհավատությանը: Ամեն»:

Կփառաբանեմ Նրան, կփառաբանեմ Նրան,
Ո՛հ, փառաբանեք մեղավորների համար մորթված Գառնուկին,
Փառք տվեք Նրան, ո՛վ բոլոր մարդիկ,
Քանզի Նրա Արյունը ջնջեց ամեն բիծ։

225 Չէք սիրո՞ւմ Նրան։ [Դահլիճն ասում է. «Ամեն»։ Ծան. խմբ.]։ Ուրեմն եկե՛ք փառաբանենք Նրան։ Բոլորդ դեպի վեր պարզած ձեռքերով փառք տվեք Նրան, մինչ եղբայրը մոտենում է հավաքույթը փակելու համար։

65-0718E Հոգևոր կերակուրը ճիշտ ժամանակին
Բրանհամի Խորան
Ջեֆերսոնվիլ, Ինդիանա ԱՄՆ

ARMENIAN

©2024 VGR, ALL RIGHTS RESERVED

Voice Of God Recordings
P.O. Box 950, Jeffersonville, Indiana 47131 U.S.A.
www.branham.org

Հեղինակային Իրավունքի Ծանուցում

Բոլոր իրավունքները պաշտպանված են: Այս գրքույկը կարող է տպվել տան տպիչի վրա անձնական օգտագործման համար կամ անվճար տրվել՝ որպես գործիք Հիսուս Քրիստոսի Ավետարանը տարածելու համար: Այս գրքույկը չի թույլատրվում վաճառել, պատճենահանել մեծ քանակությամբ, տեղադրել սոց. կայքերում, պահել ԷՀՄ-ում, թարգմանել այլ լեզուներով կամ օգտագործել դրամահավաքի համար առանց Voice Of God Recordings-ի գրավոր թույլտվության:

Հավելյալ տեղեկություն կամ այլ հասանելի նյութեր ձեռք բերելու համար խնդրում ենք կապ հաստատել հետևյալ հասցեով՝

VOICE OF GOD RECORDINGS
P.O. BOX 950, JEFFERSONVILLE, INDIANA 47131 U.S.A.
www.branham.org